bmwfj

Էկոնոմիկայի, ընտանիքի և երիտասարդության դաշնային նախարարություն

# Աշկերտություն

## Երկմասնագիտական կրթությունը և ուսուցումը Ավստրիայում

### Հեռանկարային ժամանակակից ուսուցում



www.bmwfj.gv.at

# Բովանդակություն


ՆԱԽԱԲԱՆ ........................................................ 3
1. ԱՎՍՏՐԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ................................ 6
2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ.................. 8
ԵՐԿՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ............................................... 8
3. ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........................................... 9
4. ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ......................... 11
4.1 ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՇԿԵՐՏՆԵՐԻՆ . 11
4.2 ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ................................ 12
4.3 ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ....................................................... 13
4.4 ՆՄԿՈՒ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ ........................................ 14
4.5 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ..................................... 15
5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՍ ԴՐՈՒՅՔՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ....... 16
6. ԴԵՊԻ ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ ...................... 18
7. ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ................................... 19
8. ԱՇԿԵՐՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ.................... 21
9. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ................................ 22
10. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ........................................... 24
11. ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ............................. 27
12. ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ............................. 28
13. ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ...................... 32
14. ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ.......................... 34
15. ՆԵՐԱՌԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ /ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ..................................................... 36
16. ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈւՆ ...................... 39
17. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ ............................................ 40
18. ԱՄԵՆԱՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ................ 45
19. ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ......... 48

20. ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ........................ 49
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ........................................ 49
21. ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ......................... 50
22. ԱՊԱԳԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ .............................. 51
ՀԱՎԵԼՎԱԾ ............................................. 54
1. ՔԱՂՎԱԾՔ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ՝ ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ.... 54
2. ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .............................. 61
3. ԱՇԿԵՐՏԱՅԻՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՑԱՆԿ. ԱՇԿԵՐՏԱՅԻՆ ԱՐՀԵՍՏՆԵՐ ԵՎ ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ ................................ 64
4. ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՊԻ ՎԱՅՐԵՐ ........ 81



# ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգը բնութագրվում է գործնական ուղղվածություն ունեցող ուսուցման և հիմնավոր թեմատիկ տեսական փորձառությունների և առանցքային հմտությունների համակցությամբ։ Աշկերտական ուսուցումը լիարժեք բավարարում է բոլոր այս պահանջները՝ համակցելով երկտեղ՝ ձեռնարկությունում և դպրոցում ուսուցման օգուտները։ Գործնական ուսուցումը նախատեսվում է ձեռնարկությունում, որը կոնկրետ բովանդակությամբ դասավանդման լավագույն վայրն է. լրացուցիչ թեմատիկ կրթությունը ապահովվում է կես դրույքով՝ մասնագիտական ուսուցման միջոցով։

Այս ուսուցման ուսումնական ծրագրի լայնածավալ ընդունումը ապացուցում է, որ երիտասարդները տեղյակ են աշկերտական ուսուցման օգտավետության մասին։ Յուրաքանչյուր տարիքային խմբի մոտավորապես 40 տոկոսն ընտրում է երկակի ուսուցում։ Շուրջ 40,000 ձեռնարկություններ ուսուցանում, պատրաստում են հմուտ աշխատողներ, որոնք ակտիվորեն նպաստում են մրցունակության ապահովմանն ու ամրապնդմանը։

Քանի որ ժամանակակից ՄԿՈւ համակարգը պետք է արագ և ճկուն արձագանքի բիզնեսի ոլորտի և աշխատաշուկի փոփոխված պայմաններին, կենսական է հետագայում շարունակաբար զարգացնել աշկերտական ուսուցումը։ Ուստի, Էկոնոմիկայի, ընտանիքի և երիտասարդության դաշնային նախարարությունը մշտական հիմունքներով համագործակցում է աշկերտային ուսուցման մեջ ընդգրկված այլ հաստատությունների և շահագրգիռ ընկերությունների հետ՝ արդիականացնելու երկակի ուսուցումը։ Այս ուղղությամբ արդեն իսկ կան բազմաթիվ ձեռքբերումներ։

Մոդուլային ուսուցման շնորհիվ հնարավոր է աշկերտային ուսուցումը կազմակերպել էլ ավելի ճկուն ձևով՝ այսպիսով ավելի բարձրացնելով դրա գրավչությունը։ Աշկերտական ուսուցումը առավել զարգացնելու հիմնական միջոցառումներ ձեռնարկվել են 2008 թվականին աշկերտությունների սուբսիդավորման որակական վերակազմավորմամբ և դեռ աշկերտության ժամանակահատվածում «Berufs- reifeprüfung» (կամ «Berufsmatura» – Մասնագիտական հասունություն) ազատ մուտքի հնարավորությամբ։ Ամենամյա անցկացվող «աշկերտության օրը» նպատակ ունի նպաստելու աշկերտության իմիջի ուժեղացմանը և երիտասարդության՝ աշկերտային բազմազան զբաղմունքների մասին իրազեկության բարձրացմանը։ «Ապագային հարիր՝

լավագույն ուսուցանող ընկերություն» ամենամյա պետական մրցանակի շնորհման նպատակն է տարբերակել ավստրիական ուսուցանող ընկերություններին աշկերտական ուսուցման ոլորտում ակնառու գործունեության համար և սահմանել աշկերտության մեջ որակի հստակ չափանիշ։

Այս գրքույկը տալիս է Ավստրիայում աշկերտական ուսուցման, ինչպես նաև որակի ապահովման վերաբերյալ բազմաթիվ նորամուծությունների բազմակողմանի նկարագիրը։



**Dr. Reinhold Mitterlehner**
Էկոնոմիկայի, ընտանիքի և երիտասանդության դաշնային նախարար

# 1. ԱՎՍՏՐԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ




Հապավումներ:

AP = Abschlussprüfung (ավարտական քննություն)

G+K = Allgemeine Gesundheits- und Krankenpflegeschule (ընդհանուր առողջապահության և խնամքի դպրոց)

ISCED = Internationale Standardklassifikation im Bildungswesen (Կրթության միջազգային ստանդարտ դասակարգում)

LAP = Lehrabschlussprüfung (աշկերտության ավարտական քննություն)

LUC = Lehrgang universitären Charakters (համալսարանական ՄԿՈւ կրեդիտային փոխանցման ծրագիր)

Աղբյուր. ibw

# 2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՐԿՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Պարտադիր ուսումնառության ժամկետն ավարտելուց հետո Ավստրիայում երիտասարդների շուրջ 40 տոկոսն ուսուցում է իրավաբանորեն ճանաչված աշկերտային արհեստներում՝ այսպիսով ձեռք բերելով **ամբողջական արհեստավարժ որակավորում**: Աշկերտություն մուտք գործելու համար որևէ հատուկ ուսումնական որակավորում անհրաժեշտ չէ: **Աշկերտային ուսուցումը հասանելի է բոլոր երիտասարդներին**, ովքեր ավարտել են պարտադիր ուսումնառության ինը տարին:

Աշկերտական ուսուցումից զատ, նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթություն և ուսուցումը (ՆՄԿՈւ) կարող է նաև ձեռք բերվել լրիվ դրույքով դպրոցներում, որոնց օրինակները ընդգրկում են ՄԿՈւ դպրոցներ (օրինակ՝ ճարտարագիտության, արվեստի և արհեստների դպրոցներ, բիզնես դպրոցներ, կառավարման և ծառայությունների արդյունաբերության դպրոցներ), ՄԿՈւ քոլեջներ (օրինակ՝ ճարտարագիտության, արվեստի և արհեստների քոլեջներ, բիզնեսի կառավարման քոլեջներ, կառավարման և ծառայությունների արդյունաբերության քոլեջներ, զբոսաշրջության քոլեջներ) ինչպես նաև առողջապահական դպրոցներ:

### Երկակի ուսուցումը աշկերտայի արհեստում.

**Ուսուցումը ընկերությունում և կես դրույքով մասնագիտական դպրոցում**

Նշանակալի տարբերություններ կան **աշկերտական արհեստում երկակի ուսուցման** և լրիվ դրույքով դպրոցներում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈւ) միջև:

- Աշկերտական ուսուցման համակարգում **ուսուցման երկու վայրերն** են ուսուցանող ձեռնարկությունը և կես դրույքով մասնագիտական դպրոցը:
- Աշկերտը **ուսուցման հարաբերությունների** մեջ է իր ուսուցանող ձեռնարկության հետ և միաժամանակ **ուսանող** է կես դրույքով մասնագիտական դպրոցում:
- Ձեռնարկություններում կատարվող՝ երկակի մասնագիտական ուսուցման չափաբաժինը կազմում է աշկերտության ժամկետի հիմնական մասը:
- Աշկերտության ավարտական քննությունը (LAP) անց է կացվում **արհեստավարժ փորձագետների** ներկայությամբ: Աշկերտության ավարտական քննության մեջ հիմնական ուշադրությունը մասնագիտության համար պահանջվող **գործնական հմտությունների և կարողությունների վրա է**:

| ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՝ ԵՐԿԱԿԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ | |
|---|---|
| **Ուսուցումը ընկերություններում**<br>**Աշկերտության ժամկետի**<br>**80տոկոսը**<br>**Աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների նախապատրաստում** | **Կրթությունը կես դրույքով մասնագիտական դպրոցում**<br>Աշկերտության ժամկետի 20 տոկոսը<br>Հիմնական թեմատիկ տեսության նախապատրաստում և ընդհանուր կրթության ընդլայնում |

# 3. ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2009թ. հուլիսի դրությամբ Ավստրիայի աշկերտական համակարգում գրանցված էին **242 աշկերտային արհեստներ:** Դրանք ստեղծվել են որպես անհատական, խմբային, հատուկ ուշադրության կամ մոդուլային աշկերտություններ և կարգավորվում են Դաշնային օրենսդրությամբ:

Աշկերտական բոլոր արհեստները ամրագրված են **աշկերտական արհեստների ցանկում**, որը նաև սահմանում է աշկերտության ժամկետները և աշկերտային արհեստներին առնչվող այլ հարաբերությունները, ներառյալ արդեն ավարտած աշկերտական ժամկետների համար շնորհված կրեդիտները: Ներկայում գործող աշկերտությունները տրված են հավելվածում:

Երկակի ուսուցման իրավական հիմքերը ամրագրված են **Մասնագիտական ուսուցման ակտում** (Berufsausbildungsgesetz, BAG)։ Էկոնոմիկայի նախարարը յուրաքանչյուր աշկերտային արհեստի համար սահմանում է **ուսուցման կազմակերպման կարգ, որը պարտադիր է ուսուցանող բոլոր ընկերություններում՝ աշկերտային ուսուցում մատուցելիս:**

Ուսուցման կարգավորումները պայմանավորում են համապատասխան աշկերտական արհեստին հատուկ **պաշտոնի անձնագիրը**։ Ըստ աշկերտության տարիների բաժանված գրացուցակի, պաշտոնի անձնագիրը ընդգրկում է նվազագույն **մասնագիտական հիմնական կարողություններ, գիտելիքներ և հմտություններ,** որոնք պետք է դասավանդվեն **ընկերություններում ուսուցման** ընթացքում: Աշկերտության նորաստեղծ արհեստների համար ձևավորվում են ոչ միայն պաշտոնի անձնագրերը, այլև **գործունեության նկարագրությունները.** վերջիններս կարճ ցանկի ձևով ամրագրում են մասնագիտական այն պահանջները, որոնք աշկերտը կարող է բավարարել:

Գործունեության նկարագրության և պաշտոնի անձնագրի համակցությունը երաշխավորում է, որ արհեստին հատուկ մասնագիտական դպրոցի ուսումնական պլանի դրույթները հուսալիորեն պահպանվում են:

Շատ արհեստներում պաշտոնի անձնագիրը լրացվում է ուսուցման նյութերով և ձեռնարկներով:

**Նշում.** Ուսուցման կարգավորման օրինակը կարելի է գտնել Լրացման մեջ:

| ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ | |
|---|---|
| **ընդհանուր 242 աշկերտություններ** | |
| | **4 մոդուլային աշկերտություններ** |
| **10** | **4 տարով** |
| **60** | **3 ½ տարով** |
| **148** | **3 տարով** |
| **1** | **2 ½ տարով** |
| **19** | **2 տարով** |
| **2009թ. հուլիսի դրությամբ Աղբյուր. Էկոնոմիկայի, ընտանիքի և երիտասարդության դաշնային նախարարություն, աշկերտային արհեստների ցանկ** | |

## ԵՐԿԱՄՅԱՅԻՑ ՔԱՌԱՄՅԱ ԱՇԿԵՐՏԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Աշկերտային ուսուցման ժամկետը երկուսից չորս տարի է՝ ընտրված մասնագիտությամբ պայմանավորված: Եթե ուսուցանող ձեռնարկությունը տալիս է իր համաձայնությունը, ապա աշկերտության ժամկետը կարող է նվազեցվել մեկ տարով նրանց համար, ովքեր արդեն ավարտել են **աշխատանքին հատուկ ուսուցման ժամկետներ նմանատիպ աշկերտություններում** կամ ձեռք են բերել **համապատասխան ուսումնական որակավորումներ**։

Կրեդիտներ կարող են նաև ձեռք բերվել արտերկրում ավարտած համապատասխան ուսումնառության ժամկետների համար։

### ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՆՎԱԶԵՑՆՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- **ակադեմիական միջնակարգ դպրոց(AHS)**
- **ՄԿՈւ քոլեջի (BHS)**
- **առնվազն երեք տարվա տևողությամբ ՄԿՈւ դպրոցի (BMS)**
- **այլ աշկերտային ծրագրի և համապատասխան աշկերտության ավարտական քննություն**

# 4. ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

## 4.1 ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՇԿԵՐՏՆԵՐԻՆ

Ավստրիայի գրեթե բոլոր երիտասարդները պարտադիր ուսումնառությունից հետո անցնում են կրթության կամ ուսուցման ուղի. նրանց մոտ 40 տոկոսը ընտրում են աշկերտական ուսուցման ծրագիր։ Մոտ **40,000 ձեռնարկություններ** որպես ուսուցման վայրեր բաց են այս երիտասարդների համար։ Այս փաստում է այն մասին, որ ՄԿՈւ համակարգը Ավստրիայում վայելում է մեծ հեղինակություն և միաժամանակ վկայում, որ **ապագա հմուտ աշխատուժի ուսուցումը իմաստ ունի նաև տնտեսական առումով և նվազեցնում է երիտասարդների գործազրկության ռիսկայնությունը։**

Ձեռնարկությունները, **կամավորության հիմունքով**՝ սեփական միջոցներով իրականացնում են ուսուցում. ձեռնարկատերերը վստահ են, որ այդ կերպ **հմուտ աշխատուժով** կհամալրեն սեփական բիզնեսի աշխատակիցների շարքերը։ Ուստի, աշկերտային ուսուցումը մեծ ներդրում է ապագայի համար, քանզի այսօրվա աշկերտները վաղվա որակյալ հմուտ աշխատողներն են։

Աշկերտային ուսուցման ավարտից հետո ինչպես աշկերը, այնպես էլ աշկերտային ուսուցում իրականացնող ձեռնարկությունը պարտավորված չեն շարունակելու աշխատանքային հարաբերությունները։ Այսպիսով, աշկերտային ուսուցում իրականացնող ձեռնարկության կողմից կատարվող ներդրումն ունի ռիսկայնության գործակից, որ աշկերտային ուսուցում ստացած երիտասարդները կարող են աշխատել ոչ թե տվյալ, այլ մեկ ուրիշ աշխատավայրում, որոնք նույնիսկ աշկերտային ուսուցում չեն իրականացնում:

Աշկերտային ուսուցում իրականացնող ձեռնարկությունը կարող է վարձել հմուտ աշխատողների, որոնք աշկերտության դասընթացի են մասնակցել այլ ձեռնարկություններում։ Այս **մոտեցումը ազատական ՄԿՈւ համակարգի** կարևոր առանձնահատկությունն է և ցույց է տալիս, որ ապագայի համար որակյալ աշխատուժ ապահովող ուսուցումը չպետք է դիտարկվի միայն մեկ ձեռնարկության տեսանկյունից, այլ, ընդհանուր առմամբ, դրվի ի շահ և ներկայացնի ներդրում ավստրիական տնտեսության բոլոր հատվածների համար։

## 4.2 ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեռնարկություններում ուսուցումը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով․

- Մասնագիտական ուսուցումը անց է կացվում **իրական աշխատանքային պայմաններում**: Աշկերտը, ձեռնարկության ժամանակակից մեքենաների և սարքավորումների վրա աշխատելով, ձեռք է բերում իր պաշտոնի անձնագրով նախատեսված համապատասխան անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: **Եվ ուսուցումը ավարտելուն պես նա կարող է որպես հմուտ աշխատող ծավալել որակավորված արհեստավարժ գործունեություն**:
- Ուսուցման մեծ մասը կարող է ապահովվել **արդյունավետ գործունեության միջոցով**․ այն նվազեցնում է ծախսերը և մեծացնում է աշկերտի սովորելու ցանկությունը:
- Փոքր ձեռնարկությունների համար, որոնք ի վիճակի չեն առաջարկելու աշկերտական արհեստի համար անհրաժեշտ հմտություններ և ուսուցման բազմազանություն, գոյություն ունի **ուսուցման միություն ձևավորելու միջոցով լրացուցիչ գործնական ուսուցում** իրականացնելու հնարավորություն, որը նրանց իրավունք է տալիս ապահովելու լրիվ մասնագիտական ուսուցման տրամադրումը: Արդյունաբերության որոշ հատվածներում հիմնվել են **ընկերությունների արտաուսուցման կենտրոններ** (օրինակ, այսպես կոչված՝ «ուսուցման շինարարական օբյեկտներ»):

| ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ |
| --- |
| **գործնական ուսուցում պրակտիկայի համար**<br>**ուսուցում ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ արդյունավետ աշխատանքի միջոցով**<br>**ուսուցում ուսուցման միությունում**<br>**ուսուցումից անմիջապես հետո համապատասխան պաշտոնի զբաղեցում** |

## 4.3 ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշկերտներին ուսուցանել ցանկացող ընկերությունները պարտավոր են, **մինչ նրանց հավաքագրելը, Դաշնային տնտեսական պալատի համապատասխան իրավասու աշկերտական գրասենյակին ուղարկել աշկերտության ուսուցման համար համապատասխան գրություն (հարցում): Տեղական իրավասությունը** պատկանում է շրջանի աշկերտական գրասենյակին, որտեղ ուսուցանող ընկերությունը ունի իր տեղը: Աշկերտության գրասենյակը օրենսդրությամբ պարտավոր է, Աշխատանքի պալատի հետ համատեղ, քննարկել՝ թե արդյո՞ք ընկերությունը բավարարում է աշկերտային ուսուցման անհրաժեշտ նախապայմանները: Եթե այդպես է, ապա ընկերությունը ստանում է աշկերտներ հավաքագրելու իրավունք:

### ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Իրավական պայմանների կատարում**

Ընկերությունը պետք է աշկերտներին ուսուցանելու գործունեություն ծավալելու իրավունք ունենա **Առևտրի, կոմերցիայի և արդյունաբերության կարգավորման ակտի** համաձայն: Սակայն աշկերտները պետք է ուսուցանվեն ոչ միայն առևտրի և արհեստի ձեռնակությունների, այլև **ազատական մասնագիտությունների անդամների** կողմից /ինչպիսիք են՝ դեղագործներ, ճարտարապետներ, իրավաբաններ, ինժեներներ և այլն/ և **ասոցիացիաների, վարչական գրասենյակների** և **այլ իրավաբանական անձանց կողմից:**

**Կորպորատիվ պայմանների կատարում**

Ընկերությունը պետք է հագեցած լինի անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով, որպեսզի ունակ լինի աշկերտին տալ մասնագետի պաշտոնի անձնագրով նախատեսված գիտելիքներն ու հմտությունները: Այն ձեռնարկությունները, որոնք ի զորու չեն ապահովելու նշված պայմանները աշկերտային ուսուցում կազմակերպում են ձեռնարկությունների ուսուցման միության շրջանակներում:

**Ընկերության արտադրական հզորությունը աշկետայի ուսուցում կազմակերպելու համար որոշիչ չէ:** Յուրաքանչյուր ձեռնարկատեր, անգամ **միանձնյա ընկերություն,** կարող է ուսուցանել աշկերտներ, եթե երաշխավորված է պետության կողմից և ստանում է համապատասխան աջակցություն:

Աշկերտային ուսուցում իրականացնելու համար, բացի վերոթվարկվածը, ձեռնարկությունը պետք է ունենա տվյալ մասնագիտությանը բնորոշ որակավորվորում ունեցող անհրաժեշտ **մասնագետներ և մանկավարժներ:**

## 4.4 ՆՄԿՈՒ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ

Հաճախ աշկերտության իրականացնելու համար լիազորված դասախոսը (օրինակ՝ ընկերության սեփականատերը) միևնույն ժամանակ գործում է որպես աշկերտների ուսուցանող: Այնուամենայնիվ, նա կարող է այդ առաջադրանքը վստահել այլ իրավասու աշխատակցի: Ընկերություններում աշկերտական ուսուցման հաջողությունը հիմնականում պայմանավորված է ուսուցանողի համապատասխան իրավասությամբ և մանկավարժական (դասավանդման) հմտություններով:

ՆՄԿՈւ դասախոսի աշխատանքը պահանջում է ոչ միայն նախկինում ստացած կոնկրետ մասնագիտական որակներ, այլև **մասնագիտական մանկավարժության և իրավունքին վերաբերող գիտելիքներ և հմտություններ**:

Թեկնածուները, իրենց գիտելիքներն ու հմտությունները գնահատելու համար, պետք է հանձնեն **ՆՄԿՈւ** քննություն, որը արհեստագործ վարպետի որակավորման մի մոդուլն է: ՆՄԿՈւ քննությունից կարողն են հրաժարվել միայն այն դեպքում, եթե հաջողությամբ ավարտել են **ՆՄԿՈւ** քառասունժամյա **դասընթացը**: Որոշ որակավորումներ կամ քննություններ (օրինակ՝ աշղեկի դասընթացի հաջող ավարտը) դիտվում են ՆՄԿՈւ քննությանը կամ ՆՄԿՈւ դասընթացին համարժեք:

Դասախոսների մեծամասնությունը **ուսուցանում են իրենց աշկերտներին կես դրույքով՝ իրենց հիմնական աշխատանքին զուգահեռ**: Բայց բազմաթիվ մեծ ձեռնարկություններում կան նաև լրիվ դրույքով դասախոսներ և լրիվ դրույքով ուսուցման վերահսկողներ:

| ԴԱՍԱԽՈՍԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ |
| --- |
| ▪ **թեմատիկ փորձառություն**<br>▪ **մասնագիտական մանկավարժական փորձառություն**<br>▪ **իրավական փորձառություն** |

## 4.5 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**Ուսուցման միության** շրջանակում աշկերտներին կարող են ուսուցանել նաև այն ընկերությունները, որտեղ աշկերտային աշխատանքի համար ամրագրված գիտելիքներն ու հմտությունները չեն կարող լիովին փոխանցվել։ Այս դեպքում, Մասնագիտական ուսուցման ակտը (Berufsausbildungsgesetz, BAG) ապահովում է **պարտադիր ուսուցման միությունը**: Թույլատրվում է տրամադրել ուսուցում, եթե լրացուցիչ ուսուցման չափանիշները կատարվում են այս նպատակի համար նախատեսված այլ ընկերությունում կամ ուսումնական հաստատությունում (օրինակ՝ WIFI, bfi)։ Այնուամենայնիվ, առավել ցանկալի է, որ աշկերտական աշխատանքի համար **կենսական գիտելիքներն ու հմտությունները** ուսուցանվեն հիմնականում **ամբողջ կրթական դասընթացը ուսուցանող ընկերությունում**։

Աշկերտության պայմանագրում (կամ դրա հավելվածներից մեկում) հիմնական ընկերությունից դուրս, ինչպես նաև «միության գործընկերների» (համապատասխան ընկերություններ կամ հաստատություններ) կողմից տրվող ուսուցման բովանդակության վերաբերյալ ձեռք է բերվում համաձայնություն:

Բայց նաև հնարավոր է մտնել ուսուցման միություններ կամավոր հիմունքներով, եթե ուսուցանող ընկերությունները նպատակ ունեն տալու աշկերտներին հատուկ որակավորումներ՝ հավանաբար անցնելով պաշտոնի անձնագրի սահմանները (օրինակ՝ հատուկ նշանակության համակարգչային ծրագրեր, օտար լեզվի հմտություններ, ընդհանուր հմտություններ և այլն)։

Որոշ շրջաններում ինստիտուցիոնալ **ուսուցման միություններ են** հաստատվել (ինչպիսին է` Վերին ավստրիական կորպորատիվ ուսուցման միությունը - FAV OÖ), որոնք հնարավոր գործընկեր ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների մասին տեղեկատվություն և աջակցություն են տրամադրում ընկերություններին և համակարգում են տարբեր ուսուցանող միություններին ներկայացվող չափանիշները։

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

| ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ | ԿԱՄԱՎՈՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| **Այն դեպքում, երբ ձեռնարկություն-ները չեն կարողանում լիովին բավարարել կրթական պահանջները /պաշտոնի անձնագրով նախատեսված/** | Պաշտոնի անձնագրի շրջանակներից դուրս լրացուցիչ գիտելիքների և հմտությունների նախատեսում |

| ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ |
| --- |
| ▪ Երկու կամ ավելի ընկերությունների միջև աշկերտների փոխանակում,<br>▪ մեկ կամ մի քանի այլ ընկերություններ (կամ դրանց ուսուցման արհեստանոց) աշկերտների միակողմանի ուղարկում (սովորաբար առվձար),<br>▪ աշկերտային ուսուցում իրականացնող հաստատություններում դասընթացների կամ ծրագրերի ուսուցում՝ առանց վարձավճարի: |

## 5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՍ ԴՐՈՒՅՔՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Կես դրույքով մասնագիտական դպրոցում կրթության շեշտադրումը **աշխատանքին ուղղված մասնագիտական ուսուցման** վրա է (մոտ 65 տոկոս), իսկ **ընդհանուր առարկաները** կազմում են ուսումնառության ժամկետի մոտ 35 տոկոսը։ Մասնագիտական ուսուցումը նաև ներառում է **արհեստանոցներում և/կամ լաբորատորիաներում գործնական ուսուցում:**

Կես դրույքով մասնագիտական դպրոցները հաստատված են անհատական աշկերտային աշխատանքների համար, և աշկերտը պարտավոր է կես դրույքով հաճախել մասնագիտական դպրոց՝ **կախված համապատասխան շրջանում ուսուցանող ձեռնարկության գտնվելու վայրից**։ Դասերը խմբավորված են ըստ անհատական աշկերտական արհեստների կամ որոշ դեպքերում ըստ համապատասխան աշկերտական արհեստների խմբերի։

Կես դրույքով մասնագիտական դպրոցում գոյություն ունեն դասավանդման հետևյալ **կազմակերպչական ձևերը**՝

- **ամբողջ տարին,** այսինքն՝ առնվազն մեկ լրիվ ուսումնական օր կամ երկու կեսական ուսումնական օր՝ շաբաթական
- **կուտակային,** այսինքն՝ առնվազն ութ շաբաթ՝ շարունակաբար
- **սեզոնային,** այսինքն՝ կուտակային ձևով տարվա կոնկրետ ժամանակ:

Կազմակերպչական ձևերի բազմազանությունը ենթակա է բիզնեսի ոլորտի և դպրոցի ուսուցման համար պատասխանատու մարդկանց քննարկմանը և հաշվի է առնում մասնավոր տնտեսական և ռեգիոնալ հատվածների պահանջները։

Դասավանդվող առարկաներից կախված՝ կես դրույքով մասնագիտական դպրոցներում **առարկաներ դասավանդող ուսուցիչները** առանձնանում են հետևյալ

որակավորումներով.

միջնակարգ դպրոցի (թեմատիկ) վկայական (և ՄԿՈւ դիպլոմ) գումարած առնվազն երեք տարվա բիզնեսի պրակտիկա կամ թեմատիկ արհեստագործ վարպետի որակավորում, առնվազն երեք տարվա փորձ, կամ համարժեք արհեստագործ վարպետի համապատասխան որակավորում, ինչպես նաև համալսարանի ընդունելության ընդհանուր որակավորումներ։ Ուսանողները, որոնք ունեն ECTS (European Credit Transfer System` Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ) 120 կրեդիտից պակաս, պարտավոր են համալսարան ընդունվելու որակավորման մասին վկայել (օրինակ, շրջանավարտի (Reifeprüfung), մասնագետ շրջանավարտի (Berufsreifeprüfung) կամ բարձրագույն կրթության ընդունելության քննության)։ Նրանք ձեռք են բերում մանկավարժական որակավորումներ` կրթության համալսարանական քոլեջներում բակալավրի եռամյա ուսուցման ծրագրի ձևով` առաջին, երկրորդ, ինչպես նաև հինգերորդ և վեցերորդ կիսամյակները հաճախելով կես դրույքով, իսկ երրորդ և չորրորդ կիսամյակները` ուսուցման ամբողջ դասընթացը ավարտելով: Շրջանավարտներին շնորհվում է բակալավրի ակադեմիական աստիճան (BEd):

| ԿԵՍ ԴՐՈՒՅՔՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ |
|---|
| ▪ թեմատիկ տեսական ուսուցում` ձեռնարկություններում ուսուցումը լրացնող<br>▪ ընդհանուր կրթության խորացում և լրացում,<br>▪ աշխատանքին վերաբերող օտար լեզվի ուսուցում,<br>▪ լրացուցիչ թեմատիկ գործնական ուսուցում |

# 6. ԴԵՊԻ ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ

Երիտասարդների համար հեշտ չէ ընտրել հարմար արհեստ, մոտավորապես աշկերտային 250 արհեստներից և գտնել պատշաճ աշկերտական զբաղվածություն: Տարբեր ծառայություններ և նախաձեռնություններ հաստատվել են նրանց աջակցելու համար.

- Սկզբունքորեն, երկակի համակարգում ուսուցման թափուր տեղերի տեղաբաշխումը կատարվում է **Ավստրիայի հասարակական զբաղվածության ծառայության** (ԱՀԶԾ) կարիերայի ուղղորդման միջոցով: Սակայն, ոչ բոլոր ձեռնարկություններն են գրանցում ուսուցման թափուր տեղերը ԱՀԶԾ-ի միջոցով:

- Աշկերտության, ինչպես նաև աշկերտական ուսուցման մասին ընդհանուր տեղեկատվության վերաբերյալ հավելյալ օգնություն տրամադրվում է **Ռեգիոնալ տնտեսական պալատների աշկերտության գրասենյակների կողմից,** որոնք նաև գործում են որպես մասնագիտական ուսուցման առաջին ատյանի իշխանություն: Նրանց հասցեները կարելի է գտնել սույն գրքույկի վերջին էջում:
- **Ավստրիայի Դաշնային Տնտեսական Պալատի** հետ համատեղ, ԱՀԶԾ-ն հաստատել է **առցանց աշկերտական փոխանակում** (www.ams.at/lehrstellen), որը երիտասարդներին հնարավորություն է ընձեռում արդյունավետ փնտրել պոտենցիալ ուսուցանող ձեռնարկություններ:
- **Տնտեսական պալատների Կրթական խորհրդատվության և կարիերայի ուղղորդման գրասենյակները աջակցում են երիտասարդներին՝** տրամադրելով առաջարկների բազմազանություն: Տնտեսական պալատները կարիերայի ուղղորդման **BIC** (*համակարգչային մասնագիտական տեղեկատվություն**)** գործիքով (www.bic.at) հաստատել են ժամանակակից հաղորդակցման ֆորում, որը աջակցում է երիտասարդների որոշումների կայացման գործընթացին և ապահովում է մանրամասն տեղեկատվություն աշխատանք փնտրելու ժամանակ:

# 7. ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Աշկերտության պայմանագիրը կնքվում է լիազորված դասախոսի և աշկերտի միջև և ձևավորում է մասնագիտական ուսուցման հիմքը երկակի համակարգում: Այն պետք է կնքվի **գրավոր**: Անչափահաս աշկերտների դեպքում աշկերտության պայմանագիրը  պետք է ստորագրվի նրա օրինական ներկայացուցչի կողմից: Ստանդարտ ձևերը կարելի է ձեռք բերել մասնավոր դաշնային շրջանների տնտեսական պալատների Աշկերտության գրասենյակներից:

## ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Աշկերտության պայմանագիրը գրանցման նպատակով պետք է ներկայացվի Աշկերտության գրասենյակ ուսուցումն սկսելուց առնվազն երեք շաբաթվա ընթացքում: **Ապա, Աշկերտության գրասենյակը ուսումնասիրում է աշկերտության պայմանագրի տվյալները և ուսուցանող ձեռնարկությունների համապատասխանությունը** և ի լրումն դրա տրվում են լրացուցիչ կրեդիտներ աշխատանքին հատուկ ուսումնառության ժամկետների համար: Աշկերտության պայմանագրի գրանցումը աշկերտի՝  հետագայում աշկերտության ավարտական քննություն հանձնելու համար հիմք է հանդիսանում:

## ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ.

- ☐ աշկերտի տվյալները
- ☐ աշկերտի ընտրած արհեստի անվանումը
- ☐ աշկերտության ուսումնառության ժամկետը
- ☐ ուսումնառության սկիզբը և ավարտը
- ☐ աշկերտների ուսուցման համար լիազորված ուսուցանողների՝ դասախոսի տվյալները
- ☐ կես դրույքով մասնագիտական դպրոց պարտադիր հաճախելու վերաբերյալ հայտագիր
- ☐ ուսուցման միության շրջանակներում այլ ընկերություններում կամ ուսումնական հաստատություններում անցկացված ուսումնառության ժամկետները
- ☐ աշկերտության վարձատրության չափը
- ☐ աշկերտության պայմանագրի կնքման օրը

# 8. ԱՇԿԵՐՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Աշկերտային ուսուցում իրականացնող ձեռնարկությունը, այսինքն՝ տնտեսությունը, հոգում է ընկերություններում ուսուցման ծախսերը, մինչդեռ դպրոցական կրթության (կես դրույքով մասնագիտական դպրոց) ծախսերը ֆինանսավորվում են պետության կողմից: **Այստեղից երևում է, որ որ մասնագիտական ուսուցման ծախսերի զգալի մասը հոգում են ձեռնարկությունները:**

**Աշկերտության վարձատրությունը** կազմում է աշկերտության ուսուցման ծախսերի հիմնական մասը: Աշկերտության վարձատության չափաբաժինն ամրագրված է կոլեկտիվ բանակցությունների պայմանագրերում՝ յուրաքանչյուր անհատական աշկերտական աշխատանքի համար: Երբ կոլեկտիվ բանակցությունների պայմանագրեր չկան, անհրաժեշտ է անհատապես համաձայնության գալ աշկերտության պայմանագրում աշկերտության վարձատրության շուրջ: Վարձատրությունը ավելանում է ամեն աշկերտական տարվա հետ՝ առավելագույնը կազմելով համապատասխան հմուտ աշխատողի աշխատավարձի շուրջ 80 տոկոսը:

Ուսուցման ընթացքում աշկերտները նաև պետք է իրենց արդյունավետ աշխատանքով նպաստեն ուսուցանող ընկերության տնտեսական արդյունավետությանը, որն ավելանում է աշկերտության յուրաքանչյուր տարում:

Աշկերտային ուսուցում իրականացնող ձեռնարկությունները պետության կողմից ստանում են հարկային որոշ արտոնություններ: **Սա նշանակում է, որ պետությունը, թեև անուղղակի, բայց համաֆինանսավորում է երկակի մասնագիտական** ուսուցում իրականացնող **ձեռնարկությունների ծախսերի մի մասը:**

Աշկերտային ուսուցման առաջին երկու տրվա ընթացքում գործատուի պարտավորությունների շրջանակում չեն՝ կատարել աշկերտի առողջության համար ապահովագրական ներդրումներ: Այնուամենայնիվ, աշկերտները լիովին ապահովագրված են: **Դժբախտ պատահարներից ապահովագրությունը** հանվում է ուսուցման ողջ ժամանակահատվածի համար, մինչդեռ ընդհանուր ապահովագրությունը մնում է անձեռնմխելի:

Հարկ է նշել, որ գոյություն ունեն աշկերտական ուսուցման **սուբսիդավորման մի շարք տարբերակներ**:

**Կես դրույքով մասնագիտական դպրոցը** մեքենաներով, սարքավորումներով և դասավանդման նյութերով վերազինման ծախսերը հոգում են **դաշնային շրջանները,** մինչդեռ **Դաշնային կառավարությունը** և **համապատասխան շրջանը հավասարապես** կիսում են ուսուցչական անձնակազմին տրամադրվող ծախսերը:

# 9. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

2008թ. հունիսին Աշկերտության սուբսիդավորման վերակազմակերպման շնորհիվ ուսուցանող ընկերությունների համար հասանելի են դարձել **սուբսիդավորման** մի շարք **տարբերակներ**։ Այս սուբսիդիաները և դրամաշնորհները համակարգվում են Տնտեսական պալատների աշկերտության գրասենյակների կողմից։

## ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ

Աշկերտության ամեն տարվա վերջում ուսուցանող ընկերությունը կարող է դիմել հիմնական սուբսիդավորման համար։ Սուբսիդիաների չափաքանակն է.

- աշկերտության 1-ին տարվա համար՝ համաձայն համապատասխան կոլեկտիվ պայմանագրի աշկերտության համախառն երեք վարձատրություն,
- աշկերտության 2-րդ տարվա համար՝ համաձայն համապատասխան կոլեկտիվ պայմանագրի աշկերտության համախառն երկու վարձատրություն,
- աշկերտության 3-րդ և 4-րդ տարիների համար՝ համաձայն համապատասխան կոլեկտիվ պայմանագրի աշկերտության համախառն մեկ վարձատրություն,
- աշկերտության կես տարվա համար՝ համաձայն համապատասխան կոլեկտիվ պայմանագրի աշկերտության համախառն մեկ վարձատրության կեսը,
- աշկերտության ժամկետների համար շնորհված կրեդիտների և աշկերտության ժամկետների կրճատման դեպքում հիմնական սուբսիդիան կհաշվարկվի համամասնության հիմքի։

## ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ – ԲԼՅՈՒՄ- ԲՈՆՈՒՍ II

Փոխարինելով նախկինում արդյունավետ Բլյում Բոնուսը՝ աշկերտային նոր պաշտոնները հետևյալ դեպքերում.
կսուբսիդավորվեն յուրաքանչյուրը 2,000 եվրո բոնուսով,

- աշկերտության առաջին տասը պաշտոնները նորաստեղծ ձեռնարկություններում՝ հիմնադրման օրից հինգ տարիների ընթացքում,
- աշկերտության առաջին տասը պաշտոնները ընկերություններում, որտեղ աշկերտներառաջին անգամ են ուսուցանվում՝ ուսուցումը սկսելուց մեկ տարվա ընթացքում,
- աշկերտության առաջին տասը պաշտոններն ընկերություններում, որոնք վերջին աշկերտային հարաբերությունների դադարեցումից առնվազն երեք տարի հետո կրկին հավաքագրում են աշկերտներ՝ առաջին աշկերտական հարաբերությունների սկսելուց մեկ տարվա ընթացքւմ (ընդհատումից հետո)

## ԱՇԿԵՐՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

- աշկերտության ժամկետի կեսից հետո որակավորման փաստում,
- ընկերությունների միջև արտաուսուցման չափանիշներ (ուսուցման միության չափանիշներ, աշխատանքին հատուկ աշկերտների լրացուցիչ որակավորում),
- հավաստագրված բնապահպանական, անվտանգության և առողջության մասնագետի վկայական
- աշկերտության ավարտական քննության գերազանց կամ լավ արդյունքներ
- ուսուցման դժվարություններ ունեցող աշկերտների համար չափանիշներ (օրինակ, ուսուցման պարտադիր մակարդակում գերմաներենով դասավանդման դասընթացներ, մաթեմատիկա, ժամանակակից օտար լեզու),
- երիտասարդ կանանց և տղամարդկանց համար տարբեր աշկերտություններ հավասար հնարավորություններով մուտք (սուբսիդավորման ընդգրկելիության համար համապատասխանելիություն. Աշկերտների աշխատանքի վերահսկում և աշկերտություններում 30 տոկոս մասնաբաժնով երիտասարդ կանանց տեղավորման նախագծեր):

> Աշկերտային ուսուցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն
> կարելի է գտնել www.lehrefoerdern.at (գերմաներենով)

## ԱՀԶԾ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ

ԱՀԶԾ-ն սուբսիդավորում է`

- երիտասարդ կանանց ուսուցումն այն արհեստների ուսուցման ընթացքում,
  որտեղ կանանց զբաղվածության մասնաբաժինը փոքր է,
- աշխատաշուկայում անմրցունակ երիտասարդության ուսուցում,
- ներառական ՆՄԿՈւ նախագծերի մասնակիցների ուսուցում,
- չափահասների ուսուցում (19 տարեկանից բարձր), որոնց որակավորման բացակայության պատճառով աշխատանքի խնդիրը կարող է լուծվել աշկերտության միջոցով (սա նաև ներառում է միջնակարգ ականդեմիական դպրոցի միջնակարգ կրթության վկայական ունեցողներին):

> Գերմաներենով լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել www.ams.at
> Ընկերությունների ֆինանսավորման ծառայություններ

# 10. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկակի համակարգի հաջողությունը և հետագա զարգացումը ապահովվում են տարբեր մակարդակերում բազմաթիվ հաստատությունների և գործակալությունների համագործակցությամբ։

## ԴԱՇՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

**Էկոնոմիկայի, ընտանիքի և երիտասարդության դաշնային նախարարություն (BMWFJ)**

Ձեռնարկություններում աշկերտային ուսուցման մասը գտնվում է Էկոնոմիկայի նախարարության իրավասության տակ։ Երկակի համակարգի իրավական հիմքերը ամրագրված են **Մասնագիտական ուսուցման ակտում (BAG): Աշկերտության անհատական աշխատանքների կարգավորումը** կատարվում է Էկոնոմիկայի նախարարության կողմից Աշկերտության դաշնային խորհրդատվական խորհրդի ներկայացրած փորձագիտական եզրակացությունների հիման վրա։

**Աշկերտության Դաշնային Խորհրդատվական Խորհուրդ (BBAB)**

Աշկերտության Դաշնային խորհրդատվական խորհուրդը հաստատվել է Էկոնոմիկայի նախարարության կողմից՝ սոցիալական գործընկերների առաջարկությամբ (Ավստրիայի դաշնային տնտեսական պալատ, Աշխատանքի դաշնային պալատ)։ Կես դրույքով մասնագիտական դպրոցի դասախոսները համաընտրվում են որպես խորհրդակցական անդամներ։ Աշկերտության Դաշնային խորհրդատվական խորհուրդը էկոնոմիկայի նախարարությանը ներկայացնում է փորձագիտական եզրակացություն, օրինակ՝ աշկերտական արհեստների վերակազմակերպման վերաբերյալ։

**Կրթության, արվեստի և մշակույթի դաշնային նախարարություն (BMUKK)**

Կես դրույքով մասնագիտական դպրոցի կազմակերպման դրույթները և **շրջանակային ուսումնական ծրագրերի** հիմնադրույթերը ամրագրված են Դաշնային **դպրոցների կազմակերպման ակտում:** Կրթության նախարարությունը կես դրույքով մասնագիտական դպրոցների **յուրաքանչյուր աշկերտական արհեստի համար** հաստատել է **շրջանակային ուսումնական ծրագիր**։ Բացի այդ, այն կրում է կես դրույքով մասնագիտական դպրոցի **ուսուցչական կազմի ծախսերի** 50 տոկոսը ։

## ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

**Աշկերտության գրասենյակներ**

**Ռեգիոնալ տնտեսական** պալատների Աշկերտության գրասենյակները գործում են որպես աշկերտության առաջին ատյանի իշխանություն։ Նրանք քննարկում են

(աշխատանքի ռեգիոնալ պալատների ներկայացուցիչների հետ համատեղ) **ուսուցանող ձեռնարկությունների`** աշկերտական ուսուցում տրամադրելու համապատասխանությունը թեմատիկ և անձնակազմին վերաբերող առումներով: Բացի այդ, նրանք պատասխանատու են աշկերտական պայմանագրերի զննման և գրանցման համար:

Սկզբունքորեն, նրանց պարտականությունն է աշկերտությանը վերաբերող բոլոր հարցերով աշկերտներին և ուսուցանող ձեռնարկություններին տրամադրել անհրաժեշտ **խորհրդատվություն**: Այս աշխատանքում նրանց աջակցում են **Աշխատանքի ռեգիոնալ պալատների** Աշկերտների և անչափահասների պաշտպանության գրասենյակները:

Աշկերտական գրասենյակների ղեկավարները Աշկերտության ռեգիոնալ խորհրդատվական խորհրդի առաջարկության հիման վրա նշանակում են աշկերտության ավարտական քննության հանձնախմբի նախագահներին: **Աշկերտության ավարտական քննությունները և ուսուցանող ընկերությունների սուբսիդավորման նախագծերը** նույնպես կարգավորվում են աշկերտական գրասենյակների կողմից:

**Դաշնային շրջաններ**

Դաշնային շրջանները պատասխանատու են **մասնագիտական դպրոցների կառուցման և տեխնիկական վերազինման համար**: Բացի այդ, նրանք կրում են կես դրույքով մասնագիտական դպրոցների **ուսուցչական անձնակազմի** ծախսերի 50 տոկոսը:

**Մարզային կառավարիչներ**

Ռեգիոնալ մակարդակում համապատասխան մարզային կառավարության գրասենյակների կողմից աջակցություն ստացող մարզային կառավարիչները պատասխանատու են աշկերտական ուսուցման համար և գործում են որպես **աշկերտության երկրորդ ատյանի իշխանություն**: Նրանք որոշում են կայացնում ուսուցման հարցերով բողոքների` ինչպիսին է ուսուցանող ձեռնարկության լիազորության դադարեցումը, ապօրինի գրանցված ուսուցման պայմանագրերի դադարեցումը: Մարզային կառավարիչները նշանակում են աշկերտության համապատասխան ռեգիոնալ խորհրդատվական խորհրդի անդամներին:

**Աշկերտության ռեգիոնալ խորհրդատվական խորհուրդ**

Յուրաքանչյուր շրջանում, սոցիալական գործընկերների ներկայացուցիչների հետ միասին Աշկերտության ռեգիոնալ խորհրդատվական մեկ խորհուրդ է հաստատվել` նպատակ ունենալով խորհրդատվական ծառայություն տրամադրել ՄԿՈւ վերաբերյալ բոլոր հարցերով: Խորհրդի պատրավոր է տվյալ շրջանում ներկայացնել` աշկերտային ուսուցմանը վերաբերող փորձագիտական եզրակացությունները, նկատառումները և առաջարկությունները:

Իր առաջարկությամբ, նշանակվում են աշկերտության ավարտական քննության հանձնախմբերի նախագահները:

**Ռեգիոնալ դպրոցական տեսուչներ**

Ռեգիոնալ դպրոցների տեսուչները պատասխանատու են դպրոցի տեսչավորման և իրենց պատասխանատվության ոլորտի առաջադրանքների կատարման, ինչպես նաև ռեգիոնալ ուսումնական ծրագրի ձևով դաշնային, շրջանակային ուսումնական ծրագրի իրականացման համար։

## ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

### Ուսուցանող ձեռնարկություններ

**Աշկերտության լիազորված դասախոսները** պատասխանատու են աշկերտության ուսուցման ապահովման համար։ Տվյալ ձեռնարկությունում համապատասխան աշկերտը ուսուցանվում է որպես հմուտ աշխատող, և այդ աշխատանքում նրանց աջակցում են **ՆՄԿՈւ դասախոսները**։

Արդյունաբերության տարբեր հատվածներում, **աշկերտային խորհրդատուները**, աշխատելով աշկերտության ռեգիոնալ խորհրդատվական խորհուրդների հետ, սերտ համագործակցությամբ, նշանակվում են ուսուցանող ձեռնարկություններին անհատական ուսուցման ծրագրի համապատասխան նախագծով թեմատիկ խորհրդատվություն տրամադրելու և, մասնավորապես, ուսուցանող ձեռնարկությունների և կես դրույքով մասնագիտական դպրոցների միջև համագործակցությանը նպաստելու համար։

### Կես դրույքով մասնագիտական դպրոց

Կես դրույքով մասնագիտական դպրոցները տվյալ տեղանքի **տնտեսական կյանքի բաղկացուցիչ մասն են։** Տարածաշրջանում ուսուցում իրականացնող ձեռնարկությունների հետ ուղիղ կապը նրանց կրթական առաջադրանքների կատարման հիմնական երաշխիքն է։

Նշում. Հավելվածում տրվում է երկակի համակարգում աշկերտության ուսուցման հաստատությունների նկարագիրը, ինչպես նաև նրանց պարտականությունները և իրավասությունները։

# 11. ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Աշկերտային արհեստի համար անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները կանոնակարգվում են **աշխատաշուկայի պահանջներին** համաձայն: Այս առումով, **աշխատանք կատարելու** կարողությունը առաջնահերթ է. աշկերտային ուսուցումը նպատակ ունի որակավորելու շրջանավարտներին ուսուցման ավարտից անմիջապես հետո զբաղեցնել իրենց ընտրած աշխատանքը: Ուսուցման կարգավորումները, այսպիսով, ամրագրում են ուսուցանող ձեռնարկությունում փոխանցվող ուսուցման բովանդակության նվազագույն պահանջները՝ միաժամանակ ապահովելով անհատական աշկերտային արհեստի **ուսուցման կայուն մակարդակ:**

Ուսուցման կոնկրետ բովանդակության (օրինակ՝ պաշտոնի անձնագրի անհատական տարրեր) ձևակերպման ժամանակ պետք է նկատի ունենալ, որ **որակավորման և հմտությունների պահանջները ենթակա են սիստեմատիկ փոփոխությունների**: Այդ նպատակով, պաշտոնի անձնագրի անհատական կետերը **չեն** ամրագրվում ստատիկ կերպով, այլ ձևավորվում են դինամիկ, որպեսզի ուսուցումը հեշտորեն հարմարեցվի նոր զարգացումներին:

Ուսուցման կարգավորումները կարևորում են **առանցքային հմտությունների** ապահովումը. անկախությունը, անհատական պատասխանատվությունը, խմբային աշխատանքը, և այլն, նշանակալիորեն խթանվում են ձեռնարկություններում իրականացվող ուսուցմամբ: Էկոլոգիապես ընդունելի և որակյալ աշխատանքը կազմում է յուրաքանչյուր ժամանակակից ուսուցման կարգավորման անբաժանելի մասը: Ուսուցման կարգավորումներ կազմելիս **Եվրոպական ինտեգրումը** նույնպես մեծապես կարևորվում է՝ նպատակ ունենալով մեծացնելու Ավստրիայի հմուտ աշխատուժի տեղաշարժի ցանկությունը և միաժամանակ ամրապնդելուԱվստրիայի ձեռնարկությունների մրցունակությունը:

# 12. ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ[1]

Ուսուցման կանոնակարգման **շարունակական արդիականացումը** պաշտոնի անձնագրի պահանջների բավարարման կարևորագույն երաշխիքն է: Նոր կարգավորումների նախաձեռնությունը հիմնականում պատկանում է **սոցիալական գործընկերներին**: Սակայն միջազգային զարգացումները և ուսումնական ծրագրերը նույնպես առանցքային դեր են խաղում այս առումով:

Ցանկացած պարագայում, հատվածի մասնագիտական և գործնական պահանջները միշտ առաջնային են: Ուսուցման կարգավորումների բովանդակությունը պատրաստվում է **Աշկերտության դաշնային խորհրդատվական խորհրդի** կամ **Էկոնոմիկայի նախարարության կողմից**: Աշխատանքը հիմնված է հարցումների և հետազոտական ծրագրերի վրա, որտեղ նրանց աջակցում է Ավստրիայի տնտեսության որակավորումների և ուսուցման հետազոտական ինստիտուտը (IBW):

[1] Հաջորդ էջի հարցումը տալիս է նոր աշկերտական արհեստների ներկայացման հետ կապված գործընթացների նկարագիրը:

## ՆՈՐ ԱՇԽԵՐՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

| | |
|---|---|
| **1. Պատրաստում** | □ Մասնագիտական նախադրյալների նույնականացում (օրինակ, նոր աշխատանքային դաշտի առաջացման կամ առկա աշխատանքային դաշտում պահանջների փոփոխման հետևանքով) նախագծել նոր կամ հարմարեցնել առկա աշկերտական արհեստը, Էկոնոմիկայի նախարարության, սոցիալական գործընկերների կամ ընկերության ներկայացուցիչների նախաձեռնությամբ,<br>□ Էկոնոմիկայի նախարարության և սոցիալական գործընկերների կողմից հիմնական կառուցվածքի պարզաբանում,<br>□ Եվրոպական և միջազգային զարգացումների, ինչպես նաև այլ երկրներում առաջարկված լուծումների քննարկում: |
| **2. Ուսուցման կարգավորման և շրջանակային ուսումնական պլանի մշակում** | □ Ուսուցման նախագծային կարգավորումների պատրաստում,<br>□ Աշկերտության Դաշնային խորհրդատվական խորհրդի փորձագիտական քննարկումներ,<br>□ Աշկերտության Դաշնային խորհրդատվական խորհրդի կողմից Էկոնոմիկայի նախարարությանը փորձագիտական եզրակացությունների ներկայացում,<br>□ Կրթության նախարարության ղեկավարության ներքո կես դրույքով մասնագիտական դպրոցի ոլորտից և սոցիալական գործընկերների կողմից փորձագիտական խմբի ստեղծում՝ ուսուցման կարգավորումներին համապատասխան շրջանակային ուսումնական պլան զարգացնելու համար,<br>□ Համազգային տեսության համար նախագծերի պատրաստում: |
| **3. Կարգավորումների արձակում** | □ Խորհրդատվական գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածություն,<br>□ Կարծիքների և մեկնաբանությունների գնահատում,<br>□ Էկոնոմիկայի նախարարության կողմից աշկերտական ուսուցման կարգավորումների և Կրթության նախարարության կողմից կես դրույքով մասնագիտական դպրոցների շրջանակային ուսումնական պլանի արձակում: |

| | |
|---|---|
| **4. Հաջորդող միջոցառումներ** | □ Աջակցող ուսումնական ձեռնարկների և լրացուցիչ նյութերի մշակում ընկերությունների կողմից, ուսուցանող ընկերություններին աջակցելու նպատակով աշխատողների ներկայացուցչության կամ ՄԿՈւ հաստատությունների մասնակի աջակցությամբ,<br>□ Աշկերտության գրասենյակների կողմից ուսուցանող ձեռնարկություններին տեղեկատվության տրամադրում,<br>□ Ձեռնարկություններում և կես դրույքով մասնագիտական դպրոցներում դասախոսների դասընթացներ,<br>□ Աշկերտության ավարտական քննությունների քննողների դասընթացներ,<br>□ Շարունակական գնահատում: |

# 13. ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

2006թ. հունվարին՝ Մասնագիտական ուսուցման ակտում փոփոխությունները աշկերտության մոդուլային ուսուցման հնարավորություն ստեղծեցին, որի նպատակն է բարձրացնել աշկերտային ուսուցման գրավչությունը:

Մոդուլային աշկերտություններում ուսուցումը ներառում է **երեք մոդուլներ**՝

**Ընդհանուր մասնագիտական մոդուլ**

Ընդհանուր մասնագիտական մոդուլը նպատակ ունի մոդուլային աշկերտության **հիմնական գործունեության** իրականացման համար հաղորդել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Ընդհանուր մասնագիտական մոդուլը նվազագույնը **երկու տարվա** տևողություն ունի, իսկ հիմնավորված բացառիկ դեպքերում այն կարող է նաև լինել մեկ տարի:

**Հիմնական մասնագիտական մոդուլ**

Հիմնական մասնագիտական մոդուլը նախատեսում է **ընտրված մասնագիտացման իրականացման** համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ (օրինակ՝ օդափոխության տեխնոլոգիան «Շինարար ինժեներներ և շինարարական Տեխնոլոգիաներ» մոդուլային աշկերտության մեջ): Այն նվազագույնը **մեկ տարվա** տևողություն ունի: Ընդհանուր և հիմնական մասնագիտական մոդուլների համակցված տևողությունը պետք է լինի առնվազն **երեք տարի**: Ինչպես արդեն նշվեց, քանի որ ընդհանուր մասնագիտական մոդուլը հիմնավորված բացառիկ դեպքերում կազմում է մեկ տարի, հետևաբար հիմնական մասնագիտական մոդուլը պետք է նվազագույնը լինի երկու տարի տևողությամբ:

**Հատուկ մասնագիտական մոդուլ**

Հատուկ մասնագիտական մոդուլը նպատակ ունի փոխանցելու տվյալ մասնագիտությանը բնորոշ՝ հատուկ ծառայությունների, ապրանքների կամ դրանց արտադրության համար **անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ,** և ենթադրում է **կես կամ մեկ լրիվ տարվա** ուսումնառության ժամկետ:

Այս համակարգում հնարավոր է համակցել տարբեր մոդուլներ. յուրաքանչյուր աշկերտ մոդուլային սխեմայում **պարտավորված է ավարտել ընդհանուր մասնագիտական մոդուլը և ընտրել հիմնական մասնագիտական մոդուլ**: Բացի այդ, աշկերտը **կարող** է ուսում ստանալ այլ հիմնական մասնագիտական մոդուլում և մեկ կամ մի քանի հատուկ մոդուլներում: Մոդուլների համակցությունը պետք է ընտրվի դեռ աշկերտության պայմանագրի կնքման ժամանակ, այսինքն՝ աշկերտության ժամկետի սկզբում, իսկ մոդուլները փոխելու դեպքում աշկերտության պայմանագրում կատարվում է համապատասխան փոփոխություն:

## ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

C1. Հատուկ մ. (½ - 1 տ.)

C2. Հատուկ մ. (½ - 1 տ.)

B1. Հիմնական մոդուլ (1 - 2 տ.)

B2. Հիմնական մոդուլ (1 - 2 տ.)

B3. Հիմնական մոդուլ (1 - 2 տ.)

A. Ընդհանուր մոդուլ (2տարի)

## ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Մոդուլային աշկերտությունների պարազայում տարբեր մոդուլներ համակցելու տարբերակը ընկերություններին և աշկերտներին ընձեռում է ուսուցումն **ավելի ճկուն** նախագծելու հնարավորություն: Մոդուլային համակարգի շնորհիվ ճկունությունը առկա է ոչ միայն ուսուցման նախագծման, այլև **նոր ուսուցման բովանդակության ներկայացման** մեջ: Ամբողջական աշկերտություն արդիականացնելու կամ տնտեսության հրատապ հմտությունների պահանջներին այն հարմարեցնելու փոխարեն, մոդուլային աշկերտությունները երաշխավորում են անհատական մոդուլների փոխանակում կամ լրամշակում, որը և հնարավոր է դարձնում արագ արձագանքել փոփոխվող սեկտորային պահանջներին:

Մոդուլային ուսուցման շնորհիվ այլևս անհրաժեշտ չէ նորից ներկայացնել ամբողջական աշկերտական աշխատանք, այլ հնարավոր է առկա համակարգերին **մոդուլների** տեսքով **ավելացնել** նոր ուսուցման բովանդակություն: Սրա առավելությունն այն է, որ անհատական աշկերտությունների թիվը շարունակաբար չի ավելանում, որն էլ իր հերթին ապահովում է աշկերտական արհեստի ոլորտի թափանցիկությունը: Այնուամենայնիվ, մոդուլային ուսուցման օգուտները կարող են օգտագործվել ոչ միայն աշկերտությունների նոր ներկայացման և արդիականացման մեջ. մոդուլային համակարգում նաև կարող են համակցվել առկա անհատական աշկերտական աշխատանքները, եթե իհարկե բովանդակությունները համընկնում են:Այս կարող է տանել **աշկերտությունների թվի օգտակար նվազեցմանը** (պահպանելով ուսուցման բազմազանությունը), որն էլ իր հերթին **բարձրացնում է հստակությունը**:

## 14. ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական հասունություն (berufsmatura)՝ աշկերտության դիպլոմ գումարած միջնակարգ կրթության վկայական

Մասնագիտական հասունության վկայականըհիմուտ աշխատողներին և եռամյայից քառամյա լրիվ դրույքով ՄԿՈւ դպրոցների շրջանավարտներին բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն է ընձեռում:Այս վկայականի շնորհիվ աշկերտական ուսուցումը նաև կայուն հիմք է ձևավորում բարձրագույն կրթության հատվածի համար։

Ավստրիայի բոլոր աշկերտները սկսած 2008 թվականի աշնանից, աշկերտային ուսուցմանը զուգահեռ հնարավորություն ունեն անվճար հանձնելու մասնագիտական հասունության քննություն։

Իրավական փաստաթղթերում մասնագիտական հասունությունը (Berufsmatura) կոչվում է Berufsreifeprüfung (BRP-մասնագետ շրջանավարտ)։ Ավստրիայում վկայական ունեցողներին բարձրագույն կրթություն ստանալու իրավունք է տրվում՝ համալսարան, քոլեջներ (Fachhochschulen) (կիրառական գիտությունների համալսարաններ), կրթության համալսարանական քոլեջներ, հետմիջնակարգ ՄԿՈւ դասընթացներ, ինչպես նաև հետմիջնակարգ մակարդակում միջնակարգ կրթության վկայական նախատեսող այլ ծրագրեր։

Մասնագետ շրջանավարտի քննության շրջանակներում պետք է հանձնել հետևյալ **չորս մասնակի քննությունները**՝

- գերմաներեն
- մաթեմատիկա
- ժամանակակից օտար լեզու
- **մասնագիտական ոլորտի քննություն** (աշկերտի աշխատանքային ոլորտին համապատասխան)

**Երեք մասնակի քննություններ** (գերմաներեն՝ որպես մայրենի լեզու, մաթեմատիկա և օտար լեզու) **կարելի է հանձնել աշկերտական ուսուցման ընթացքում**, իսկ **վերջին մասնակի քննությունը՝ 19 տարեկանից բարձր անձանց աշկերտության ավարտական քննությունից հետո**։ Միայն քառամյա աշկերտությունների պարագայում հնարավոր է աշկերտության ավարտական քննության շրջանակում հանձնել մասնագիտական ոլորտի մասնակի քննություն։

Մասնագիտական հասունության քննությունը անվճար հանձնելու համար առնվազն մեկ մասնակի քննություն պետք է հանձնել աշկերտության ընթացքում և մնացածը **աշկերտության ավարտից հետո՝ հինգ տարվա ընթացքում։**

Ամեն դաշնային տարածաշրջանում գործում է համակարգող գրասենյակ, որը

պատասխանատու է նախապատրաստական դասընթացների գրանցման և կազմակերպման համար: **Նախապատրաստական դասընթացներին** մասնակցելը հնարավոր է բոլոր աշկերտություններում **հենց առաջին տարուց** և **աշխատանքային ժամերից դուրս:** Ուսուցանող ընկերության համաձայնությամբ, սակայն, դասընթացներին **կարելի է նաև հաճախել աշխատանքային ժամերի ընթացքում:** Աշկերտի համաձայնությամբ աշկերտության ժամկետը այդ նպատակով կարող է երկարացվել առավելագույնը 18 ամսով, որը սակայն պարտադիր չէ:

**Նշում.** Այնուամենայնիվ, հնարավոր է հանձնել մասնագիտական հասունության քննություն ուսուցումից **հետո,** որը, սակայն, կապված է ծախսերի հետ: Այս պարագայում ևս դրամաշնորհների բազմազանությունը նույնպես առկա է:

## ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԼՐԻՎ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

Աշկերտական ուսուցումը հետաքրքիր տարբերակ է նաև միջնակարգ՝ ակադեմիական դպրոցում, միջնակարգ կրթության վկայական ձեռք բերածների համար (Matura՝ հասունություն): Ուսուցանող ընկերության համաձայնությամբ, միջնակարգ կրթության վկայական (Matura՝ հասունություն) ունեցողների համար հնարավոր է մեկ տարով նվազեցնել աշկերտության ժամկետը՝ այսպիսով, մասնավորապես՝ ակադեմիական միջնակարգ դպրոցի շրջանավարտներին առավել դյուրին աշխատանքի ընդունելով:

# 15. ՆԵՐԱՌԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ /ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՆՄԿՈւ ներառական (ներգրավող) սխեմայով (գերմաներեն՝ IBA - International Bachelor of Arts (Հումանիտար գիտությունների միջազգային բակալավր), օրենսդիրը **աշխատաշուկայում անմրցունակ մարդկանց համար** սոցիալական գործընկերների կողմից մանրամասն նախապատրաստական աշխատանքի հիման վրա ճկուն նախատիպ է ստեղծել, որի նպատակն է այս անձանց ընձեռել մասնագիտական որակավորման ձեռքբերման և աշխատանքային կյանք ներգրավման հնարավորություն:

Ներառական ՆՄԿՈւ-ը հասանելի է մարդկանց հետևյալ խմբերին՝

- պարտադիր ուսումնառության վերջում հատուկ ուսումնական կարիքներով մարդկանց, ովքեր առնվազն մասնակիորեն ուսուցանվել են ըստ հատուկ կարիքներով դպրոցի ուսումնական պլանի,
- մարդկանց, որոնք միջնակարգ մակարդակում ձեռք չեն բերել որևէ որակավորում կամ ստացել են բացասական գնահատական ավարտական քննությունից,
- հաշմանդամություն ունեցող անձանց, հաշմանդամների զբաղվածության մասին Ակտում (Behinderteneinstellungsgesetz՝ «Հաշմանդամների զբաղվածության մասին» Օրենք) և հաշմանդամների մասին համապատասխան ռեգիոնալ Ակտում նշված իմաստով (Landesbehindertengesetz՝ «Հաշմանդամների մասին» Օրենք),
- մարդկանց, որոնց համար կարիերայի ուղղորդման միջոցառումների շրջանակում, կամ աշկերտության անհաջող տեղավորման փորձի պատճառով մոտ ապագայում հնարավոր չի լինի գտնել աշկերտության որևէ թափուր տեղ, բացառապես անհատական նկատառումներից ելնելով:

Գոյություն ունեն ներառական ՆՄԿՈւ-ի երկու հնարավոր տարբերակներ. **աշկերտության ժամկետի երկարացման** դեպքում օրինական աշկերտության ժամկետը երկարացվում է մեկ տարով, բացառիկ դեպքերում մինչև երկու տարով, իսկ **մասնակի որակավորման ձեռքբերման** դեպքում աշկերտական արհեստի կամ մի քանի արհեստների միայն մի մասն է դասավանդվում:

Ներառական ՆՄԿՈւ-ը **մասնագիտական ուսուցման օժանդակությամբ** առավել դյուրին է:

| ՆԵՐԱՌԱԿԱՆ ՆՄԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ | | |
|---|---|---|
| | **Աշկերտության երկարացված ժամկետ** | **Մասնակի որակավորման ձեռքբերում** |
| **Ուսուցում** | Աշկերտության ամբողջական ծրագրի /ըստ պաշտոնի անձնագրի/ ուսուցում | Աշկերտական աշխատանքի (կամ աշխատանքների) պաշտոնի անձնագրի որոշ տարրերի ուսուցում ուսուցման պայմանագրի համաձայն |
| **Տևողություն** | Կանոնավոր աշկերտության սահմանված ժամկետը երկարացվում է մեկ, բացառիկ դեպքերում՝ երկու տարով | Մեկից մինչև երեք տարի |
| **Կես դրույքով մասնագիտական դպրոցի հաճախում** | Կես դրույքով մասնագիտական դպրոցի պարտադիր հաճախում | Նշված ուսուցման նպատակներով պայմանավորված՝ մարդիկ լիազորված կամ պարտավորված են հաճախել կես դրույքով մասնագիտական դպրոց |
| **Ավարտական քննություն** | Աշկերտության ավարտական քննություն | Անհատական ավարտական քննություն |

## 16. ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Աշկերտության ավարտական քննությունը նպատակ ունի պարզելու թեկնածուի համապատասխան աշկերտական արհեստի համար անհրաժեշտ հմտությունների և իրավասությունների ձեռքբերման և պատշաճ կերպով արհեստին հատուկ գործունեություն իրականացնելու կարողության փաստը:

Աշկերտության ավարտական քննությունը բաղկացած է **գործնական և տեսական մասերից**: Թեկնածուն տեսական քննություն չի հանձնում կես դրույքով մասնագիտական դպրոցի ավարտական վկայական ունենալու պարագայում:

Աշկերտության ավարտական քննություն կարող են հանձնել հետևյալ անձինք՝

- ☐ աշկերտները (իրենց սովորած կամ աշկերտական արհեստին առնչվող)
- ☐ մարդիկ, ովքեր ավարտել են աշկերտության սահմանված ժամկետը դպրոցական կրթության համար ստացած կրեդիտներով կամ նրանք, ովքեր պարտադրված չեն նման կրթություն ստանալուց հետո անցնել աշկերտության որևէ ժամկետ:

Սակայն, Մասնագիտական ուսուցման ակտը աշկերտության **ավարտական քննության հնարավորություն է** ընձեռում նաև այն անձանց, ովքեր չեն ստացել **ֆորմալ որևէ ուսուցում** (երկակի ուսուցում կամ դպրոց)՝ այսպիսով նրանց տրամադրելով ֆորմալ արհեստավարժ որակավորում ձեռք բերելու հնարավորություն:

Կոնկրետ ժամկետներում նրանք պետք է համապատասխանեն հետևյալ **պայմաններին**՝

- ☐ 18 տարեկանից բարձր լինեն
- ☐ փաստեն, որ իրենք ձեռք են բերել համապատասխան աշկերտական արհեստի համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, օրինակ՝ համապատասխան ժամկետում մասնակի հմուտ կամ այլ պրակտիկ գործունեություն կատարելով կամ համապատասխան դասընթաց հաճախելով:
- ☐ Համապատասխան աշկերտական արհեստի համար սահմանված ժամկետի առնվազն կեսի ավարտը նույնպես ընդունվում է որպես հիմք, եթե աշկերտության մնացած ժամկետում աշկերտության պայմանագիր կնքելու այլ հնարավորություն չկա:

# 17. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ

2008թ. տարեվերջի տվյալներով Ավստրիայի Դաշնային տնտեսական պալատի (WKÖ) աշկերտության վիճակագրությունը վկայում է ընդհանուրը թվով 131,880 աշկերտների մասին, այսինքն՝ աշկերտների ընդհանուր թիվը 2007թ. համեմատ ավելացել է 1.6 տոկոսով: Աշկերտության սկսնակների թիվը (աշկերտական ուսուցման տարուց անկախ) 2008 թ. վերջին 40,517 էր և այդպիսով նվազել էր նախորդ տարվա համեմատ 1.6 տոկոսով (41,180)։ Աշկետության առաջին տարում աշկերտների թիվը 40,265 էր, որը նախորդ տարվա համեմատ 2.2 տոկոսով նվազեցում էր (41,176)։ Սա արդեն աշկերտների թվի սպասվող ուղղության փոփոխության ցուցանիշն է՝ այսուհետ երիտասարդների թվի նվազմամբ։

Աշկերտների մեծամասնությունը ուսուցանվում են արհեստում, առևտրում և այլ ծառայություններում: Արդյունաբերության և զբոսաշրջության և ժամանցի արդյունաբերության հատվածներից հետո երկրորդ ամենամեծ ուսուցման հատվածը կոմերցիան է: Բոլոր հատվածներում նոր և արդիականացված պաշտոնի անձնագրերը երաշխավորում են երիտասարդների համար **աշկերտական ուսուցման գրավչության** ավելացումը և **ընկերությունների**՝ հմուտ աշխատողներ **ուսուցանելու ցանկության** պահպանումը:

## ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

| Ընդունման տարի | Աշկերտների ընդհանուր թիվը |
|---|---|
| 1970 | 137 445 |
| 1980 | 194 089 |
| 1990 | 145 516 |
| 2000 | 126 600 |
| 2001 | 123 762 |
| 2002 | 120 486 |
| 2003 | 119 040 |
| 2004 | 119 071 |
| 2005 | 122 378 |
| 2006 | 125 961 |
| 2007 | 129 823 |
| 2008 | 131 880 |

2008թ. դեկտեմբերի 31 դրությամբ

Աղբյուր. Դաշնային Տնտեսական Պալատ, աշկերտության վիճակագրություն

## ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

| Ոլորտ | Ուսուցանող ձեռնարկություններ մաքուր | Ուսուցանող ձեռնարկություն տոկոսներով | Աշկերտներ մաքուր | Աշկերտներ տոկոսներով |
|---|---|---|---|---|
| Արհեստներ, առևտուր և ծառայություններ | 21 808 | 55.1 | 61 859 | 46.9 |
| Արդյունաբերություն | 1 568 | 4.0 | 17 141 | 13.0 |
| Կոմերցիա | 6 079 | 15.3 | 19 913 | 15.1 |
| Բանկեր և ապահովագրություն | 255 | 0.6 | 1 144 | 0.9 |
| Տրանսպորտ | 466 | 1.2 | 2 488 | 1.9 |
| Զբոսաշրջության և ժամանցի ինդուստրիա | 4 855 | 12.3 | 14 495 | 11.0 |
| Տեղեկատվություն և խորհրդատվություն | 1 831 | 4.6 | 3 161 | 2.4 |
| Ոչ պալատային | 2 661 | 6.7 | 8 032 | 6.1 |
| Ոչ պալատային §§ 29 and 30*[2] | 83 | 0.2 | 3 647 | 2.7 |
| **Ընդհանուրը՝** | **39 606** | **100.0** | **131 880** | **100.0** |

2008թ. դեկտեմբերի դրությամբ

Աղբյուր. Ավստրիայի Դաշնային Տնտեսական Պալատ(WKÖ), Աշկերտության վիճակագրություն 2008թ.

## ԱՇԽԱՏՈՒԺԻ ՖՈՐՄԱԼ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշկերտային ուսուցումը բարձր է գնահատվում որպես ՄԿՈւ ուղի. ըստ 2007թ. միկրոմարդահամարի, **Ավստրիայի աշխատուժի 40 տոկոսը** հպարտանում են աշկերտության դիպլոմով՝ որպես իրենց բարձրագույն կրթության ձեռքբերում: Տղամարդկանց շրջանում այդ մասնաբաժինը 49 տոկոս է, կանանց շրջանում՝ 29 տոկոս:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Աշկերտության շրջանավարտների աշխատանքային կարգավիճակը և մասնագիտական գործունեությունը ցույց են տալիս, որ նրանք Ավստրիայի տնտեսության **հիմուտ աշխատուժի պոտենցիալն են**: Աշկերտության շրջանավարտների ամենամեծ բաժինը կարելի է հայտնաբերել **մանր արհեստների և նման զբաղմունքների մասնագիտական խմբում (74 տոկոս)**: Գործադիր շրջանում **մոտ 40 տոկոսը** առանձնանում են աշկերտության դիպլոմով: Տեխնիկների և

*[2] Ժամկետներ՝ ավարտած հաստատություններում համաձայն Դեռահասների մասին Դատական Ակտի (Jugendgerichtsgesetz) և ռիսկի ենթարկված երիտասարդների խնամքի և դաստիարակության ապաստարաններում (Fürsorgeerziehungsheimen՝ Հոգաբարձության և Խնամքի Տներ) համաձայն Դեռահասների Բարեկեցության Ակտի (Jugendwohlfahrtsgesetz՝ Երիտասարդների Բարեկեցության մասին Օրենք), ինչպես նաև անկախ ՆՄԿՈւ հաստատություններում:

կրտսեր մասնագետների մասնագիտական խումբը կազմում է աշկերտության շրջանավարտների մասնաբաժնի համարյա մեկ երրորդը ։

## ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)




Աղբյուր. Ավստրիայի վիճակագրություն, աշխատուժի հարցում, միկրոմարդահամարի արդյունքներ

## ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ

2007 թ. աշկերտության շրջանավարտների գործազրկության մակարդակը 3.4 տոկոս էր՝ ցածր գործազրկության միջին 4.4 տոկոս մակարդակից, ինչպես նաև ցածր միջնակարգ ակադեմիական դպրոցների և ՄԿՈւ դպրոցների շրջանավարտների գործազրկության մակարդակից:

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)




Աղբյուր `Վիճակագրություն Ավստրիա, 2007թ. աշխատուժի հարցում, միկրոմարդահամարի արդյունքներ

# 18. ԱՄԵՆԱՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ

Ավստրիայում գոյություն ունի աշկերտական զբաղմունքների լայն դաշտ, որ տատանվում է ավանդույթներով հարուստ արհեստներից մինչև արդի բարձր տեխնոլոգիական աշխատանքները: Ինչ վերաբերում է երիտասարդների մասնագիտական ընտրությանը, սակայն, պետք է նշել, որ բազմազան տարբերակները օգտագործվում են սահմանափակ չափով: Ինչպես ցույց է տալիս Ավստրիայի դաշնային տնտեսական պալատի աշկերտության վիճակագրությունը (WKÖ), **կին աշկերտների ավելի քան երկու երրորդը և տղամարդ աշկերտների համարյա կեսը** ուսուցանվում են համապատասխանաբար **տասը** աշկերտություններում:

Երիտասարդության մասնագիտական ընտրության դաշտը ընդլայնելու համար նախաձեռնությունների և գործողությունների բազմազանություն է ձեռնարկվել (օրինակ՝ աղջիկների օր, տղաների օր, աղջիկները և տեխնոլոգիան): Կին աշկերտ դիմորդների համար, մասնավորապես, երկարաժամկետ միջոցառումներ են կազմակերպվել՝ խրախուսելու նրանց ոչ այդքան հայտնի կամ կանանց համար ոչ ավանդական աշկերտական զբաղմունքների ընտրության գործում:

Յոթերորդ, ութերորդ և իններորդ դասարաններում առաջարկվող Կարիերայի ուղղորդման չափանիշները նույնպես կենսական նշանակություն ունեն այս կապակցությամբ: Երիտասարդների մասնագիտության ընտրության մեջ փոփոխությունները խրախուսելու համար, սակայն, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ դեռևս վաղ տարիքից:

## ՏԱՍԸ ԱՄԵՆԱՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԱՇԽԵՐՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ

| Աշխերտական արհեստ | Թիվը | Կին աշխերտների ընդհանուր մասնաբաժինը %-ով |
|---|---|---|
| 1. Մանրածախ առևտրի ծառայություններ ընդհանուրը [3)] | 10 730 | 24.0 |
| 2. Գրասենյակի օգնական | 5 585 | 12.5 |
| 3. Վարսավիր և մոդելագործ (ստիլիստ) | 5 388 | 12.0 |
| 4. Ռեստորանային մասնագետ | 2 219 | 5.0 |
| 5. Խոհարար | 1 830 | 4.1 |
| 6. Գաստրոնոմիայի փորձագետ[4)] | 1 657 | 3.7 |
| 7. Հյուրանոցա-ռեստորանային առևտրի կոմերցիոն օգնական | 1 320 | 2.9 |
| 8. Դեղագործական առևտրի աջակցություն | 1 039 | 2.3 |
| 9. Ադմինիստրատիվ օգնական | 899 | 2.0 |
| 10. Ծաղկավաճառ | 828 | 1.8 |
| **«Լավագույն տասնյակ», ընդհանուրը՝** | **31 495** | **70.3** |
| **Ընդհանուրը՝** | **44 784** | **100.0** |

2008թ. դեկտեմբեր, Աղբյուր. Ավստրիայի դաշնային տնտեսական պալատ, աշկերտության վիճակագրություն

## ՏԱՍԸ ԱՄԵՆԱՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԱՇԽԵՐՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ

[3] Ներառում է աշկերտներ մանրածախ առևտրի ծառայություններում տարբեր մասնագիտացումներով և մանրածախ առևտրական (նախկին մասնագիտական անվանումը)

[4] ներառում է խոհարար և ռեստորանային մասնագետ

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ

| Աշկերտական արհեստ | Թիվը | Տղամարդ աշկերտներիընդհանուր մասնաբաժինը %-ով |
|---|---|---|
| 1. Ավտոփոխադրամիջոցների ճարտարագիտություն | 6 536 | 7.5 |
| 2. Էլեկրտական սարքերի ճարտարագիտություն | 4 859 | 5.6 |
| 3. Մեքենաշինության տեխնոլոգիա | 4 628 | 5.3 |
| 4. Մանրածախ առևտրի ծառայություններ ընդհանուրը | 4 440 | 5.1 |
| 5. Խոհարար | 3 753 | 4.3 |
| 6. Հյուսնություն | 3 562 | 4.1 |
| 7. Որմնադիր | 3 138 | 3.6 |
| 8. Մետաղական արդյունաբերության՝ մետաղամշակման արվեստի մասնագիտացմամբ | 2 963 | 3.4 |
| 9. Կոյուղու և օդափոխության տեխնիկայի մասնագիտացում գազի և ջրի/ջեռուցման մատակարարման մեջ | 2 353 | 2.7 |
| 10. Ներկարար | 2 021 | 2.3 |
| **«Լավագույն տասնյակ», ընդհանուրը՝** | **38253** | **43.9** |
| **Ընդհանուրը՝** | **87 096** | **100.0** |

2008թ. դեկտեմբերի դրությամբ.
Աղբյուր. Ավստրիայի դաշնային տնտեսական պալատ, աշկերտության վիճակագրություն

# 19. ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## «Պետության վաստակավոր ուսուցանող ընկերություն» պետական մրցանակ

**Էկոնոմիկայի նախարարը շնորհում է «Պետության վաստակավոր ուսուցանող ընկերություն» մրցանակը աշկերտական ուսուցման մեջ հատուկ նվաճումներ ձեռք բերած ձեռնարկություններին Մասնագիտական ուսուցման ակտի (BAG) § 30 ա կետի համաձայն:** Պետական մրցանակ շնորհելու չափանիշը ենթադրում է՝ բարեհաջող արդյունքներ աշկերտության ավարտական քննությունների ժամանակ և մարզային ու ազգային մրցույթներում, կարիերայի ուղղորդման ոլորտում նվիրված ներգրավվում, ուսուցանող ընկերության կողմից ձեռնարկված համագործակցության քայլեր, և աշկետների և դասախոսների համար ներքին և արտաքին CET (հավաստագրված բնապահպանական, անվտանգության և առողջության վկայական) ծրագրեր:

Այս մրցանակի համար հայտերը պետք է ուղարկել համապատասխան մարզի աշկերտության գրասենյակում գտնվող աշկերտության ռեգիոնալ խորհրդատվական խորհուրդ:

| |
|---|
| Պետական մրցանակ ստացած բոլոր ուսուցանող ձեռնարկությունների ցանկը կարելի է գտնել՝<br>www.ausbilder.at/staatlichausgezeichneterlehrbetrieb (Գերմաներեն) |

## «ԱՊԱԳԱՅԻՆ ՀԱՐԻՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

«Ապագային հարիր լավագույն ուսուցանող ձեռնարկություններ» պետական մրցանակը շնորհվում է տարին մեկ անգամ էկոնոմիկայի նախարարության կողմից փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների անվանակարգում:

Պետական մրցանակի նպատակներն են՝ բարելավել աշկերտական ուսուցման որակը, նորարարությունն ու կայունությունը: Ինչպես նաև՝

- աշկերտության մեջ սահմանել որակի հստակ ազդակ
- ճանաչել երիտասարդության ուսուցման ոլորտում ավստրիական տնտեսության գերազանց աշխատանքը,
- նպաստել աշկերտական ուսուցման մեջ նոր ձեռնարկությունների ներգրավմանը,
- ծնողների և երիտասարդության շրջանում բարձրացնել Ավստրիայի ընկերություններում տրամադրվող ուսուցման և աշկերտական զբաղմունքների լայն իրազեկումը:

Պետական մրցանակի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել՝ www.ibw.at/fitforfuture (Գերմաներեն)

# 20. ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Միջազգային տնտեսության մեջ մրցունակ մնալու համար անհրաժեշտ են լավագույն որակավորումներով փորձառու աշխատողներ: Եվրոպական Միությունում (ԵՄ) աշկերտական ուսուցումը այս առումով առանցքային դեր ունի: Այսօր, աշկերտական ուսուցումը դիտվում է որպես երիտասարդներին իրենց կարիերայում ամուր սկզբնական դիրք ապահովելու կարևոր գործիք:

Էկոնոմիկայի նախարարության քաղաքական նպատակները այս կապակցությամբ հետևյալն են՝

- **երաշխավորել աշկերտական ուսուցման համակարգի արժեքը,**
- ապահովել Ավստրայի քաղաքացիների **տեղաշարժը** և թափանցիկությունը, ինչպես նաև արտերկրում ձեռք բերած որակավորումների ճանաչումը, որին նախատեսված է հասնել, հատկապես, պատշաճ կերպով դասակարգելով աշկերտության ավարտական քննությունները Որակավորումների ազգային շրջանակում (NQF - ՈԱՇ) և Որակավորումների Եվրոպական շրջանակում (EQF - ՈԵՇ),
- մասնակցել աշկերտների, երիտասարդ որակավորված աշխատողների և դասախոսների համաեվրոպական փոխանակմանը,
- լրացուցիչ կերպով նպաստել շարժունակությանը՝ իրականացնելով ՄԿՈւ-ի (ECVET) կրեդիտային փոխանցման համակարգի վերաբերյալ Հանձնաժողովի հանձնարարականին,
- **ինտենսիվացնել** մասնագիտական կրթության, ուսուցման և որակավորումների հետազոտությունը, հատկապես ուղղված պատշաճ և հեռանկարային պաշտոնի անձնագրին,
- նպաստել Եվրոպայում՝ տարբեր ռեգիոնների միջև, սերտ համագործակցությանը բավարար ուսուցման թափուր տեղեր և ճշգրիտ ուսուցման ենթակառուցվածք տրամադրելու նպատակով,
- նախնական/արհեստագործական/ մասնագիտական կրթության և ուսուցման մեջ ընդգրկել Եվրոպական չափանիշները, այսպիսով՝ խթանելով հաղորդակցվելու և կյանքի տարբեր երևույթները հասկանալու կարողությունը:

## 21. ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ավստրիան և **Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը** պայմանագիր են կնքել ՄԿՈւ ոլորտում համագործակցության և **մասնագիտական վկայականների և որակավորումների փոխադարձ ճանաչման մասին**։ Այս պայմանագրի հիման վրա, Ավստրիայի ավելի քան ՄԿՈւ 270 որակավորումներ (աշկերտության ավարտական քննություններ և դպրոցական որակավորումներ) և մոտ 350 գերմանական եզրափակիչ վկայականներ և աշկերտության դիպլոմներ, առ այսօր փոխադարձաբար ճանաչվել են։ Ավստրիական 26 արհեստագործ վարպետի քննությունների և նույնաքանակ գերմանական որակավորումների համարժեքություն է ձեռք բերվել։

**H**

Ավստրիան պայմանագիր է կնքել **Հունգարիայի** հետ ՄԿՈւ համագործակցության և **մասնագիտական վկայականների ու որակավորումների փոխադարձ ճանաչման մասին**։ Մինչև հիմա ավստրիական 23 եզրափակիչ աշկերտական քննությունների և 23 հունգարական հմուտ աշխատողների քննությունների համարժեքություն է ձեռք բերվել։ 2006թ. Հունգարիայի ՄԿՈւ համակարգի վերակառուցման շնորհիվ Ավստրիայում և Հունգարիայում 33 զբաղմունքների համարժեքության մեկ այլ պայմանագիր է կնքվել։ Ավստրիայի և Հունգարիայի միջև պաշտոնական և իրավաբանորեն պարտադիր համարժեքության համար անհրաժեշտ գործընթացը(սկսվել է 2009թ. հուլիսից) դեռևս շարունակվում է։

**I**

Ավստրիայի և **Բոլցանոյի** ինքնավար **մարզի**[5] միջև աշկերտության ավարտական քննությունների փոխադարձ ճանաչման կարգավորումը դեռևս ուժի մեջ է։Այժմ կողմերի միջև աշկերտության 77 ավարտական քննությունների համարժեքություն կարող է ձեռք բերվել ։

[5] Գտնվում է Իտալիայի հյուսիսում ։

# 22. ԱՊԱԳԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Աշկերտական ուսուցման մեջ ընդգրկված բոլոր հաստատությունների ընդհանուր նպատակն է պահպանել այն որպես մասնագիտական ուսուցման գրավիչ ուղի և շարունակաբար զարգացնել այն։

Անցած տարիներին այս կապակցությամբ կան բազմաթիվ ձեռքբերումներ.

- 1997թ. բոլոր աշկերտությունների ավելի քան երկու երրորդը կամ **արդիականացվել** կամ **նորից են ստեղծվել** (ներառյալ բարձրաստիճան պաշտոնյաներով աշկերտական զբաղմունքները)։

- **Ներառական/ներգրավող ՆՄԿՈւ-ի** հետ միասին, օրենսդիրը հատուկ կարիքներով երիտասարդների համար ստեղծել է ժամանակակից և ճկուն ՆՄԿՈւ սխեմա։ Այս բնագավառում աշկերտային ուսուցում ստացած և այժմ պաշտոնավարող մարդկանց ավելացումը ուսուցման այս սխեմայի հաջողության ապացույցն է։ Ներգրավված աշկերտների թիվը 1,940-ից /2005թ./ հասել է 3,920-ի /2008թ./։ Ներառական ՆՄԿՈւ սխեմայի գնահատումը բացահայտել է, որ այն տրամադրող բոլոր ընկերությունների երեք քառորդը շատ կամ բավականին գոհ են։

- **Մոդուլային ուսուցմամբ** երկակի աշկերտային ուսուցման համակարգը ընդլայնվել է ճկուն և կարիքներին ուղղված մոդելով՝ պահելով միջազգային կրթության քաղաքականության զարգացումները։

- **Մասնագիտական հասունության (Berufsmatura) անվճար քննություն հանձնելու հնարավորությունը** հանդիսանում է աշկերտության գրավչությունը բարձրացնելու և Ավստրիայի կրթական համակարգում թափանցելիությունը ավելացնելու կրթական քաղաքականության գլխավոր հիմնաքարը։ «Աշկերտություն և հասունություն» ուսուցման համակցությունը և՛ երիտասարդների, և՛ տնտեսության համար բացում է նոր հեռանկարներ։

- Աշկերտության սուբսիդավորման վերակազմակերպումը բերում է բիզնեսի ծախսերի նշանակալի կրճատման և, այդպիսով, ուսուցանող ընկերությունների համար գնահատանքի հստակ ազդակ է։

## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԴԵՌևՍ ՊԻՏԻ ՀԱՂԹԱՀԱՐՎԵՆ.

- **Երկակի համակարգի հետագա զարգացումը**

Տնտեսական և սոցիալ քաղաքականության փոփոխվող կառուցվածքների շնորհիվ աշկերտական ուսուցման հետագա շարունակական զարգացումը և արդիականացումը հանդիսանում է կրթության քաղաքականության հիմնական նպատակը։ Ապագայում աշկերտային համակարգը կարող է մասնագիտական նոր բնագավառների, օրինակ՝ սոցիալական ոլորտի համար դառնալ հետաքրքիր տարբերակ և հարմարեցվի ՆԿՄՈւ փոփոխվող պահանջներին՝ բարելավելով ՄԿՈւ գործընկերների միջև ցանցային շփումը (ձեռնարկություններ և դպրոցներ)։

- **Որակավորումների ազգային շրջանակի ստեղծում (NQF ՝ ՈԱՇ)**

Եվրամիության հանձնարարականի հիման վրա, Ավստրիայում որակավորումների ազգային շրջանակը պետք է ստեղծվեր մինչև 2010 թվականը։ Եթե հնարավոր է, մասնագիտական կրթության և ուսուցման բոլոր որակավորումները պիտի դասակարգվեն ութ մակարդակների։ Միացնելով Ավստրիական ՈԱՇ-ը Որակավորումների եվրոպական շրջանակին (EQF՝ ԵՈՇ) կուժեղացնի միջազգային համեմատութան մեջ Ավստրիական որակավորումների նշանակալիության ըմբռնումը։ Սա Ավստրիական աշկերտայի համակարգի համար մեծ հնարավորություն կլինի, քանի որ ՄԿՈւ ծրագրերի այս տիպը չի կիրառվում շատ երկրներում։ Այն նաև ազդանշում է աշկերտական համակարգի և դպրոցական ՄԿՈւ ծրագրերի համարժեքությունը։

- **Խորացված մասնագիտական խորհրդատվություն և կարիերայի ուղղորդում**

Ավստրիայի երիտասարդներին նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսուցման ուղիների լայն շրջանակ է հասանելի, որոնց մասին, սակայն, նրանք շատ քիչ գիտեն։ Ուստի կարևոր է ուժեղացնել կարիերայի ուղղորդումը յոթերորդ, ութերորդ և իններորդ դասարաններում և նաև սահմանել պատշաճ միջոցներ, դեռևս վաղ դասարաններում։ Այս կապակցությամբ հիմնական տնտեսական հմտությունների ձեռքբերումը շատ կարևոր է։

# ՀԱՎԵԼՎԱԾ

## 1. ՔԱՂՎԱԾՔ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ՝ ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ « ՇԻՆԱՐԱՐ ԻՆԺԵՆԵՐՆԵՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»*[6]

§ 1. (1) «Շինարար ինժեներներ և շինարարական տեխնոլոգիաներ» աշկերտությունը հաստատվել է որպես մոդուլային աշկերտություն։

(2) Բոլոր աշկերտների համար պարտադիր «Շինարար ինժեներներ և շինարարական տեխնոլոգիաներ» ընդհանուր մասնագիտական մոդուլից բացի պիտի ուսուցանվի հետևյալ հիմնական մասնագիտական մոդուլներից մեկը `

1. Գազի և սանիտարական տեխնոլոգիա (H1)
2. Ջեռուցման տեխնոլոգիա (H2)
3. Օդափոխության տեխնոլոգիա (H3)

(3) Մեկ այլ հիմնական մասնագիտական մոդուլ կամ հետևյալ հատուկ մասնագիտական մոդուլներից մեկը կարելի է ընտրել՝ հաշվի առնելով § 1 գլխի 4 պարբերությունը ավելի խորը փորձառություններ և մասնագիտական ուսուցում ձեռք բերելու նպատակով.

1. Լողասենյակի դիզայն (S1)
2. Էկոէներգիայի տեխնոլոգիա (S2)
3. Վերահսկման համակարգեր և հետադարձ կապի վերահսկման տեխնոլոգիաներ (S3)
4. Տեխնիկական շինարարական սարքավորումների պլանավորում (S4)

| Հիմնական Մոդուլներ | ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՄԱԿՑՎԵԼ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | H1 | H2 | H3 | S1 | S2 | S3 | S4 |
| **H1** | | X | X | x | X | x | X |
| **Տևողություն** | | 4 տարի | 4 տարի | 4 տարի | 4 տարի | 4 տարի | 4 տարի |
| **H2** | x | | X | | X | x | X |
| **Տևողություն** | 4 տարի | | 4 տարի | | 4 տարի | 4 տարի | 4 տարի |
| **H3** | x | X | | | X | x | X |
| **Տևողություն** | 4 տարի | 4 տարի | | | 4 | 4 | 4 |

[6] * 63րդ «Շինարար ինժեներներ և շինարարական տեխնոլոգիաներ» աշկերտական արհեստի մասնագիտական ուսուցման մասին Էկոնոմիկայի և Աշխատանքի Դաշնային Նախարարության վճիռը (Շինարար ինժեներներ և շինարարական տեխնոլոգիաներ ուսուցման կարգավորում ), տրված 2008թ. փետրվարի 19-ին ։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տարի | տարի | տարի |

(4) Վերը նշված են հնարավոր են հիմնական և հատուկ մասնագիտական մոդուլների համակցությունները.

(5) Աշկերտության առաջին երկու տարիների ընթացքում, «Շինարար ինժեներներ և շինարարական տեխնոլոգիաներ» ընդհանուր մասնագիտական մոդուլը պիտի ուսուցանվի: Ընդհանուր և ընտրված հիմնական մասնագիտական մոդուլի ուսուցման տևողությունը երեք տարի է: Եթե աշկերտները գրանցվում են մեկ այլ հիմնական կամ հատուկ մասնագիտական մոդուլի համար, աշկերտության ժամկետը չորս տարի է: Աշկերտության մոդուլային ուսուցման մեջ «Շինարար ինժեներներ և շինարարական տեխնոլոգիաները» տևում է առավելագույնը չորս տարի:

(6) Այս Կարգավորման մեջ օգտագործվող տերմինները ներառում են և՛ իգական, և՛ արական սեռերը: Աշկերտության պայմանագրում, աշկերտության վկայականում, պայմանագրի օրինակներում և աշկերտության ավարտական վկայականում աշկերտական զբաղմունքը պիտի նախանշվի աշկերտի սեռին համապատասխան ձևով (“Installations-und Gebäudetechniker՝ շինարար ինժեներներ):

(7) Բոլոր հիմնական և հատուկ մասնագիտական մոդուլները, որոնք պետք է ուսուցանվեն կամ ավարտվել են, պետք է ամրագրվեն աշկերտության պայմանագրում, աշկերտական վկայականում, պայմանագրի օրինակներում և աշկերտության ավարտական վկայականում՝ աշկերտական մասնագիտության կողքին կատարելով համապատասխան նշում:

*Ուսուցման կարգավորումը ներառում է գործունեության նկարագրություն և բոլոր հիմնական և հատուկ մասնագիտական մոդուլների համար պաշտոնի անձնագիր: Հետևյալում մեկ հիմնական և մեկ հատուկ մասնագիտական մոդուլի համար գործունեության և պաշտոնի անձնագրի նկարագրության օրինակներ են տրվում.*

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§ 2. (1) Ուսուցանող ձեռնարկություններում և կես դրույքով մասնագիտական դպրոցում մասնագիտական ուսուցման արդյունքում ընդհանուր մասնագիտական մոդուլ «Շինարար ինժեներներ և շինարարական տեխնոլոգիա» և հիմնական մասնագիտական մոդուլ «Գազ և սանիտարական տեխնոլոգիա» ուսուցում ստացած աշկերտները կարող են կատարել հետևյալ աշխատանքները՝

1. տարբեր նյութերից խողովակների և խողովակաշարերի միացումներ, այդ թվում՝ խողովակների պաշտպանություն և մեկուսացում,
2. ֆունկցիոնալ փորձարկումների, ճնշման և հերմետիկության փորձարկումների

կատարում, և միջավայրի և ճնշման չափում,

3. գազամատակարարման սարքերի հավաքում, մոնտաժում և փորձարկում, կեղտաջրերի հեռացում, ջրամատակարարման տեղակայում, տաք ջրի միացում և սանհանգույցների միացումներ,
4. գազամատակարարման սարքավորումների պահպանում և սպասարկում, կեղտաջրերի հեռացում, ջրամատակարարման տեղակայում, տաք ջրի և սանհանգույցների միացումներ,
5. գազամատակարարման սարքավորումների խաթարումների և թերությունների հայտնաբերում և հեռացում, կեղտաջրերի հեռացում, ջրամատակարարման տեղակայում, տաք ջրի միացում և սանհանգույցների միացումներ,
6. ընդհանուր տեխնիկական հարցերով խորհրդատվական ծառայությունների ապահովում:

(4) Ուսուցանող ձեռնարկություններում և կես դրույքով մասնագիտական դպրոցում մասնագիտական ուսուցման արդյունքում «Լողասենյակի դիզայն» հատուկ մասնագիտական մոդուլով ուսուցում ստացած աշկերտները կարող են իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. լողասենյակի դիզայնի համար նախագծերի նախապատրաստում և համակարգչային ծրագրերով գծագրերի պատրաստում,
2. հաճախորդներին լողասենյակների դիզայնի վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների տրամադրում՝ հաշվի առնելով գույները, չափերը, հակադրությունները և առողջության հետ կապված ասպեկտները,
3. պլանավորում, ծախսերի հաշվարկ, իրականացում, փաստաթղթային ձևակերպում և լողասենյակի դիզայնի նախագծերի վերջնական հաշվարկ:

## ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

§ 3. (1) Գործունեության նկարագրության իմաստով իրավասությունների ձեռքբերման համար աշկերտը պետք է ընդհանուր մասնագիտական մոդուլի վերջում ստանա հետևյալ գիտելիքները և հմտությունները.

| Կետ | «Շինարար ինժեներներ և շինարարական տեխնոլոգիա» ընդհանուր մասնագիտական մոդուլ |
|---|---|
| 1. | **Ուսուցանող ընկերություն** |
| 1.1 | Ուսուցանող ընկերության և իր գործընկերների ծառայությունների պորտֆելի իմացություն |
| 1.2 | Ուսուցանող ընկերությունում աշխատանքային գործընթացների և ուսուցանող ընկերության կազմակերպման վերաբերյալ գիտելիքներ |
| 1.3 | Կորպորատիվ ծառայութունների մատուցման իրավական շրջանակների և ընկերության համար կարևոր այլ իրավական կարգավորումների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ |
| 1.4 | Կորպորատիվ ռիսկերի, ինչպես նաև դրանց նվազեցման և կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ |
| 1.5 | Որակի կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառում և իմացություն |

| | |
|---|---|
| 1.6 | Գործող սարքավորումների և օժանդակ նյութերի ֆունկցիոնալ կիրառում, պահպանում և սպասարկում |
| 1.7 | Աշխատանքի և ընկերության անվտանգությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը և հիգիենայի ստանդարտներին համապատասխան պահվածք |
| **2.** | **Աշկերտային ուսուցում** |
| 2.1 | Աշկերտության պայմանագրից բխող աշկերտի և ուսուցանող ընկերության պարտավորությունների իմացություն ( Մասնագիտական Ուսուցման Ակտի 9 և 10 բաժինները) |
| 2.2 | Ուսուցման բովանդակության և ուսուցման նպատակի մասին գիտելիքներ |
| 2.3 | Հիմնական գիտելիքներ աշխատանքային օրենսգրքի կանոնների մասին, որոնք պիտի դրսևորվեն |
| **3.** | **Միջառարկայական ուսուցում**<br><br>Համապատասխան գիտելիքների և հմտությունների դասավանդման ժամանակ, աշկերտի հետևյալ միջկարգապահական իրավասությունների ու հմտությունների խթանումը պետք է կարևորվի. |
| 3.1 | Մեթոդական հմտություններ, օրինակ՝ լուծումների ռազմավարության զարգացում, անկախ մատակարարում, տեղեկատվության ընտրություն և կազմավորում, որոշումների կայացում, և այլն |
| 3.2 | Սոցիալական հմտություններ, օրինակ ՝ թիմային աշխատանք, քննադատության անաչառ արտահայտում, փաստարկների փաստացի ներկայացում, ուշադրություն և հարգանք և այլն |
| 3.3 | Անձնական հմտություններ, օրինակ ՝ ինքնավստահություն, միջոցառումներին մասնակցելու ցանկություն, կարիքների և շահերի արտահայտում և այլն |
| 3.4 | Աշխատանքի նկատմամբ վերաբերմունք, օրինակ ՝ ուշադրություն, վստահելիություն, պատասխանատվություն, ճշտապահութուն, նվիրվածություն, դեպի ծառայություն և հաճախորդներ ուղղվածություն և այլն |
| **4.** | **Թեմատիկ ուսուցում** |
| 4.1 | Համապատասխան տեխնիկական կարգավորումների իմացություն |
| 4.2 | Հասարակ խողովակների, հավաքովի գծագրերի և չափային նախագծերի զննում |
| 4.3 | Խողովակների և հավաքովի պլանների զննում |
| 4.4 | Նյութերի և օժանդակ նյութերի, դրանց հատկությունների, կիրառությունների, կառավարման հնարավորությունների իմացություն |
| 4.5 | Մետաղների և պլաստիկների մշակման ընդհանուր հմտություններ (չափագրում, սղոցում, կտրում, հորատում, անցքերի կոնաձև լայնացում, պտուտակների տաշում, մեխում, գամում, սեղմաքանդակում, ծռում |
| 4.6 | Տարբեր նյութերի միացման մեթոդների կիրառում, ինչպիսիք են՝ եռակցում, զոդում, կցասեղի և կցորդիչների միացում, սողնակային միացումներ և կպչուն միացումներ՝ հաշվի առնելով ռիսկերը և կիրառելով պատահարների կանխարգելման միջոցառումներ |
| 4.7 | Խողովակների սառը ծռում և սառը ուղղում, ինչպես նաև տաք ծռում և տաք ուղղում |
| 4.8 | Խողովակների և խողովակաշարերի տեղադրում, համապատասխան նյութերի օգտագործմամբ ճյուղավորում և հարմարեցում |
| 4.9 | Խողովակների և սարքավորումների ներքին և արտաքին քայքայման դեմ պաշտպանական միջոցառումների իմացություն |
| 4.10 | Սառը և տաք ջրի համակարգերի և չորացման համակարգերի վստահելի պաշտպանություն և |

| | |
|---|---|
| | առանձնացման վերաբերյալ գիտելիքներ |
| 4.11 | Խողովակների պաշտպանության և խողովակների մեկուսացման, ինչպես նաև դրանց փորձարկման կատարում |
| 4.12 | Խողովակաշարերի երկարացման և խողովակների տեղադրման համար անհրաժեշտ միջոցների վերաբերյալ գիտելիքներ |
| 4.13 | Հերմետիկության և ճնշման փորձարկումների կատարում |
| 4.14 | Ֆունկցիոնալ փորձարկումների և միջոցների և ճնշումների չափման իրականացում |
| 4.15 | Հարմարեցման գործողության կառուցվածքի և ռեժիմի վերաբերյալ գիտելիքներ |
| 4.16 | Տարբեր վառելիքային գազերի հատկությունների և օգտագործման վերաբերյալ գիտելիքներ |
| 4.17 | Էներգետիկ և շինարարական տեխնոլոգիայում սարքերի ֆունկցիաների և տեղադրման տարբերակների իմացություն |
| 4.18 | Կարևոր չափումների, փորձարկումների, անվտանգության և կարգավորման համակարգերի կիրառություն և գիտելիքներ |
| 4.19 | Խողովակաշարերի նախնական հավաքման վերաբերյալ գիտելիքներ |
| 4.20 | Էլեկտրատեխնիկայի, էլեկտրոնային տեխնիկայի և էլեկտրական չափումների տեխնոլոգիային վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ |
| 4.21 | Էլեկրտրականության վտանգների վերաբերյալ գիտելիքներ |
| 4.22 | Տեխնիկական զեկույցների կազմում |
| 4.23 | Էներգիայի այլընտրանքային ձևերի իմացություն |
| 4.24 | Ընկերություններին հատուկ աշխատանքային պատահարների ժամանակ նախնական բժշկական օգնության (առաջին օգնություն) իմացություն |
| 4.25 | Ոլորտին հատուկ SS -ի վերաբերյալ հիմնարար գիտելիքներ և ընկերություններին հատուկ ԷՏՄ (Էլեկտրոնային տվյալների մշակում) (ապարատային և ծրագրային ապահովում) |
| 4.26 | Անգլերեն տեխնիկական տերմինների և արտահայտությունների իմացություն և կիրառում |

(2) Գործունեության նկարագրության իմաստով իրավասությունների ձեռքբերման համար աշկերտը պետք է հիմնական մասնագիտական մոդուլի վերջում ստանա հետևյալ գիտելիքները և հմտությունները.

| Կետ | **«Գազ և սանիտարական տեխնոլոգիա» հիմնական մասնագիտական մոդուլ** |
|---|---|
| 1. | Վերադասերի, կոլեգաների, հաճախորդների և մատակարարների հետ բանակցություններ՝ հաշվի առնելով թեմատիկ արտահայտություններ և տերմիններ |
| 2. | Միացման տեխնիկաների կիրառում, ինչպիսին է գազաեռակցում արգելված դիրքում (համաձայն Ավստրիայի ստանդրտների ինստիտուտի (OENORM M 7807)), աղեղի եռակցում և պլաստիկների եռակցում |
| 3. | Առանձնացման տեխնիկաների կիրառում |
| 4. | Հիդրավլիկայի վերաբերյալ գիտելիքներ |

| | |
|---|---|
| 5. | Մատակարարման և հեռացման համար ջրի և գազախողովակների չափման գիտելիքներ |
| 6. | Հեղուկային մեխանիկայի և խողովակացանցերի հաշվարկման գիտելիքններ |
| 7. | Ջրահեռացման և ջրամաքրման մեթոդների կատարման իմացություն |
| 8. | Ջրամաքրման սարքերի տեղակայում |
| 9. | Տնային ջրամատակարարման սարքավորումների և տաք ջրի կարգավորման և բաշխման սարքավորումների իմացություն |
| 10. | Տաք ջրի մատակարարման համար արեգակնային և ջեռուցման պոմպերի համակարգերի հիմնարար գիտելիքներ |
| 11. | Ջրա և գազամատակարարման, ինչպես նաև կեղտաջրերի և վնասակար գազերի հեռացման սարքավորումների տեղադրում, այդ թվում համապատասխան սարքերի հավաքում և համապատասխան մասնագիտական ստանդարտների համաձայն դուրսբերման տեղակայում |
| 13. | Գազի, ջրի և տաք ջրի սարքերի ֆունկցիաների և տեղադրման տարբերակների իմացություն |
| 14. | Ջրամատակարարման, տաք ջրի և սանիտարական սարքավորումների, կեղտաջրերի հեռացման և գազի սարքերի տեղակայում, հարմարեցում, միացում և շահագործում |
| 15. | Ջրամատակարարման, տաք ջրի և սանիտարական սարքավորումների, կեղտաջրերի հեռացման և գազի սարքերի պահպանում, սխալների և թերությունների հայտնաբերում, գնահատում և վերացում |
| 16. | Թեմատիկ չափումների և անվտանգության սարքավորումների կիրառում և իմացություն |
| 17. | Աշխատանքին հատուկ հիգիենայի իմացություն |
| 18. | Փորձարկման և նախագծերի փաստաթղթերի նախապատրաստման և կազմման իմացություն |
| | Ծխնելույզների և ծխնելույզային գազի համակարգերի, ինչպես նաև դրանց տեղակայման իմացություն |

3) Գործունեության նկարագրության իմաստով իրավասությունների ձեռքբերման համար աշկերտը պետք է հատուկ մասնագիտական մոդուլի վերջում ստանա հետևյալ գիտելիքները և հմտությունները.

| Կետ | «Լողասենյակի դիզայն» հատուկ մասնագիտական մոդուլ |
|---|---|
| 1. | Հաճախորդներին ուղղված պահվածք և հաճախորդներին ուղղված հաղորդակցում (օրինակ, նաև հեռախոսով վաճառք իրականացնելու և խորհրդատվական զրույցներ ապահովելու կարողություն, բողոքների կարգավորում) |
| 2. | Հասարակ և հեռանկարային նախագծերի կազմում |
| 3. | Աշխատանքին հատուկ ԷՏՄ-ի ( Էլեկտրոնային տվյալների մշակում) իմացություն և ընկերությանը հատուկ ԷՏՄ –ի և բազմաթիվ տեղեկատվական տեխնոլոգիաների (օրինակ՝ ինտերնետ, նյութերի բազա) կիրառում |
| 4. | Նախագծերի և դիտումների համակարգչային կազմավորում ծրագրային գծագրության միջոցով |
| 5. | Քրոմատիկայի (ծաղիկների և գույների մասին գիտություն) և գույնի կայունության ապահովման իմացություն |
| 6. | Լողասենյակի դիզայնի համամասնությունների և կոնտրաստի ազդեցության գնահատում |
| 7. | Լողասենյակի դիզայնում առողջության ասպեկտների քննարկում |

| | |
|---|---|
| 8. | Լողասենյակների պլանավորում և դիզայն՝ հաշվի առնելով անձնագրի պահանջները ուղղված դեպի թիրախային խմբերը (վելնես, ֆենշույ, և այլն ) |
| 9. | Ծրագրի կառավարման և ծրագրի կատարման, ինչպես նաև շինահրապարակների համակարգման հիմնարար գիտելիքներ |
| 10. | Նախագծի ծախսեր ( օրինակ՝ աշխատանքային ժամեր, նյութեր) |
| 11. | Հաշվառման փաստաթղթերի նախապատրաստում (աշխատանքի գրանցում, ստանդարտներին համապատասխանեցում) |
| 12. | Փորձարկման և նախագծի փաստաթղթային ձևակերպման նախապատրաստում |

## 2. ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԴԱՇՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

#### ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ, ԸՆՏԱՆԻՔԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- Մասնագիտական Ուսուցման Ակտ
- Աշկերտական արհեստների ցանկ
- Աշկերտական արհեստների ուսուցման և քննության կարգավորումներ
- Ընկերություններում աշկերտական ուսուցման գերագույն վերահսկիչ իշխանություն

#### ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՐՎԵՍՏԻ և ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- Դպրոցական ուսուցման վերաբերյալ բազմազան օրենսդրություն
- Կես դրույքով մասնագիտական դպրոցների շրջանակային ուսումնական ծրագիր
- Կես դրույքով մասնագիտական դպրոցի ուսուցչական կազմի ծախսերի մարում մինչև 50 տոկոսի չափով

#### ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Սոցիալական գործընկերության ներկայացուցիչներ
- Էկոնոմիկայի նախարարության համար փորձագիտական եզրակացության մշակում ( օրինակ՝ աշկերտության և ՄԿՈւ -ի հետ կապված տարբեր հարցերի կարգավորման վերաբերյալ)

### ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

#### ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ

- Հաստատվել են ռեգիոնալ տնտեսական պալատներում
- Մասնագիտական ուսուցման առաջին ատյանի իշխանություն
- Ուսուցման ձեռնարկությունների համապատասխանության քննում (հարմարություններ, կազմ)
- Գրանցված աշկերտության պայմանագրերի քննում և գրանցում
- Խորհրդատվություն ուսուցանող ձեռնարկությունների համար
- Խորհրդատվություն աշկերտների համար
- Աշկերտության ավարտական քննության խորհուրդների նախագահների նշանակում
- Աշկերտության ավարտական քննությունների և սուբսիդիաների կատարում

#### ՌԵԳԻՈՆԱԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉՆԵՐ

- Ազգային շրջանակային ուսումնական ծրագրի իրականացում
- Մանկավարժական և թեմատիկ վերահսկողություն
- Կառավարում, պլանավորում և համակարգում
- Կազմակերպչական և ՄՌ զարգացում, որակի ապահովում, խորհրդատվություն և վեճերի

կարգավորում որոշ շրջաններում կես դրույքով մասնագիտական դպրոցի վերաքննիչների համագործակցությամբ

## ԴԱՇՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ

- Կես դրույքով մասնագիտական դպրոցների կառուցում, զինում և պահպանում
- Կես դրույքով մասնագիտական դպրոցի ուսուցչական կազմի ծախսերի փակում մինչև 50 տոկոսի չափով

## ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐ

- Մասնագիտական ուսուցման երկրորդ ատյանի իշխանություն; կարգավորում են ապօրինի գրանցված աշկերտական պայմանագրերի ՄԿՈւ հարցերի բողոքները և դադրեցումները

**Աշկերտության մարզային խորհրդատվական խորհուրդ**

- Սոցիալական գործընկերների ներկայացուցիչներ
- Մարզային մակարդակում ՆՄԿՈւ հարցերով խորհրդատվական մարմին

## ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

### ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Լրիվ մասնագիտական ուսուցման ապահովում երիտասարդների համար
- Ուսուցման նախագծում ուսուցման կարգավորման հիման վրա

### ՆՄԿՈՒ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ

- Երիտասարդների համար բազմակողմանի արհեստին հատուկ և անձին ուղղված ուսուցման ապահովում

### ԿԵՍ ԴՐՈՒՅՔՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

